

## X      ԱԼԵՄԳԻՐ <sup>1)</sup>

(Վէպ պարսկական կեանքից)

### VI

... Կանալք պատի տակից, իսկ Խոսրէվը փողոցի  
մէջ տեղից, ետ մնացած, սակայն գաղտագողի, աչքը  
միշտ նրանց, գնաց ուր նոքա գնացին. որովհետև ա-  
ղախինը քիչ ետ էր մնացել և ասել էր երիտասարդին.

— Հետեւիր մեզ և նշանակած տեղս սպասիր մին-  
չև գամ իմաց տամ. խսնումս ուզում է խօսել քեզ  
հետ...

Եւ Ալիշէ խսնումը իր աղախին ֆաթմալի հետ  
շուկալից շուկալ անցներով՝ դուրս եկան Սարչէմա,  
քայլեցին դէպի Շահաբդիւլազիմի թաղը և մտան նրա  
ծուռ ու մուռ փողոցները:

Խոսրէվը երբ ալդ տեսաւ, պահ մի վարձնեց: Նեղ,  
աւերակներով ու ֆլատակներով, աղպանոցի փոխուած  
բացուածքներ ունեցող ալդ հեռաւոր փողոցների ամա-  
յութիւնը ուշքի բերեց նրան: Սիրտը սեղմուեց. սկսեց  
զղալ, մինչև իսկ քայլերը դանդաղացըրեց և վերջ ի  
վերջոյ մի պւերակի մօտ կանգ առաւ:

Երևի աղախինը նկատեց ալդ, որովհետև բռնեց  
խսնումի թևեց, մի քանի ըսպէ խօսեց նրա հետ, ա-  
պա, շուրջը նալելուց և ստուգելուց յետոյ որ անցորդ  
չը կար, արագ քայլերով մօտ եկաւ և ասաց Խոսրէվին.

— Միթէ աղան լոգնեց արդէն:

— Ո'չ... շփոթուեց երիտասարդը — բալց այս ժը-  
տեղ էք տանում ինձ;

<sup>1)</sup>Տես «Առամայ» № 1 1904 թ.  
ՀՈՒՄԱՑ

—Այս այն՝ ծիծաղեց աղախինը—երևում է որ այս կողմերը չես եղել: Խանումի մօտ ենք գնում, բայց կողմնակի խուլ փողոցներով. իսկոյն դուրս կը դանք մեր տան առաջ... Սակայն, եթէ վախկոտ ես, ետ դարձիր. քեզ խնդրող չը կայ..

Ասաց, առանց պատասխանի սպասելու դարձաւ և միացաւ խանումին ու երկուսն էլ շարունակեցին իրենց ճանապարհը:

Խոսրէվը մի վայրկեան շուարած մնաց, լետոյ ամաչեց իր վախենալուց, թոթուեց իրեն և հետևեց նըրանց, վճռելով միշտ հեռուէից գնալ՝ տեսնելու թէ ուր են հասնելու վերջ ի վերջուր:

Փողոցից փողոց—աւելի վլուածքների և բացուածքների մէջ եղած շաւիղներով, երբեմն ուղղակի քանդուած պատերից անցնելով, երկու կանայք քիչ լետոյ իջան մի նեղ ու խուլ փողոց, որ ծալրից ծայր միապազաղ աղիւսէ պատ ունէր և հեռուում մի փոքրիկ դըռնակ: Հասկացաւ: Հարեմխանալի ետևի դռնով էին ուզում իրեն ներս մտցնել: Եւ վախ զգաց: Ըմբռնեց որ մի նշանաւոր մարդու տուն էր մտնելու. կեանքի մէջ առաջին անգամն էր այդ դիպուածը. թէև Ալիշէի գեղեցկութիւնը գերել էր նրան, բայց վախը աւելի զօրեղ դտնուեց:

Կանգ առաւ փողոց դուրս հանող վլուածքի այս կողմը և սպասեց:

Աղախինը, որ թողել էր խանումին ծանր քալիելու դէպի փոքրիկ դուռը, դարձաւ, իշաւ վլուածքից երիտասարդի մօտ և արագ ասաց.

—Սպասիր այստեղ. քեզ կը բերեմ կնոջ վերնազգեստներ և լետոյ ինձ հետ միասին կը մտնենք... Ներքինի չը կալ. մի ծերունի ծառալ է միայն, որ խանումի շունն է... Հագուստը քեզ կը բերեմ միւս դըռնով...

Ու անհետացաւ, թողնելով երիտասարդին սրտատրոփի և վախով լցուած:

Երբ երկու կանայք անհետացել էին, մի բոպէ մտածեց ետ դառնալ, վախչել: Սրտի ճմլումն աւելանում էր, մի տեսակ անհանգստութիւն էր համակում

Նրանու նստեց մի գլորուած պատի կտորի վրայ և պահ  
մի մտածեց:

Թէ ուր էր—ինքն էլ չը գիտէր: Շահաբդիւլազի.  
մի թաղումն էր—այդ հասկացել էր. բայց եթէ ետ  
գառնալ կամենար, ձիաքարշի գիծը գտնելու համար  
անշուշտ նրան պէտք էր հարցնել առաջին պատահած  
անցորդի:

Միւս կողմից, հարեմխանան, այն հաճուքը որ նո-  
րից պիտի տեսնէր գեղեցիկ Սլիշալին տնալին կիսա-  
մերկ հագուստով, երեսը լիովին բաց, որ պիտի մանա-  
ւանդ ունենար այդ կնոջ իր գրկի մէջ—այնտեղ, այդ  
խորհրդաւոր պատերի ետևում, իր կեանքումը երբէք  
չը տեսած, մինչև ալժմ իրեն յաճախ գրաւող կանա-  
նոցում...

Ու մնաց, Եւ տամնուհինգ բոպէից յետոյ նա, Ֆաթ-  
մա աղախնի հետ, դողդոջուն, գունատ՝ երեսի ծակոտ-  
կէն ըուզանդի տակ, պարուրուած կապոյտ սաւանով,  
հագած կանացի լայն շալվարը, ոտքերը մի զոյդ տն-  
յարմար կարմիր մուճակների մէջ—մտնում էր փոք-  
րիկ դռնից ներս:

Հարեմխանալի ալդ բագը սկսում էր մի հրաշալի,  
հօվասուն և լաւ խնամուած պարտէզով:

Դռան վրայ նստած ծառան միայն գլուխը բարձ-  
րացրեց և ասաց.

— Այդ գոյւ ես, Ֆաթմա:

— Ես եմ. խանումը եկել է:

— Նոր եկաւ. իսկ դու ինչո՞ւ էիր մենակ թողել  
նրան... որ խանը իմանայ... Հետինդ ով է:

Այս բոլորը նա ասում էր ոչ իրը քննողի պէս,  
այլ իրը հետաքրքրուողի: Ծերունի դռնապանը, իրաւ-  
որ, Սլիշէ խանումի շունն էր. մի խոփած, ողորմելի  
ծերուկ, որ գրեթէ միշտ ննջում էր դռան ետեղ  
կկզած:

— Խանումին ես Սար-չէշմէ թողի, որ ալս նոր  
աղախնին գնամ բերեմ:

— Հա, նոր աղախին է... իսկ սիրուն է:

— Քեզ ինչ, ծերունի...

Միծաղեց ֆաթման և երիտասարդի հետ ներս մտան:

Ալիշան Նասրուլլահ խանի չորրորդ և ամենասիրելի կինն էր, բերուած Շիրազից և առանձին արտօնութիւններ վալելող Նրան տուած էր հարեմիանալի երկրորդ բագը, բոլորովին անջատուած առաջինից և միմիայն մի փակ դռնով նրա հետ կապուած:

Այդ բագում Ալիշէն տէր և իշխան էր լիազօրունէր իր առանձին պարտէզն ու շատրուանով աւազանը, իր խոհանոցն ու սենեակները, իր աղախիններն ու սե ստրկուհին: Նասրուլլահ խանը ոչինչ չէր ինալիւ սիրած կնոջը հիւրի դարձնելու և նրա բնակարանը՝ դրախտ:

Ճոխութիւն էր տիրում ամեն կողմ. թաւիշ, մետաքս և գորգեր, հազարներ էին նստել տանտիրոջ վրար:

Այդ իսկ բագումն էր, որ ոտք կոխեց երիտասարդը և քիչ լետոլ մտաւ մի այերճ զարդարուած սրահ, որի դռան առաջ նա սառած մնաց հիացումից:

Մետաքսապատ մի բարձր ներքնակի վրայ, մէջքը փափուկ և ճոխ բարձերի թիկն տուած՝ նստել էր ժըպտուն, զեղեցկութեան մի հրաշակերտ, թանգագին ակնեղէններով շողշողուն, տնալին կիսամերկ, կուրծքն ու ոտքերը բաց հագուստով Ալիշէ խանումը, որ հրաւիրում էր պատանուն մօտ գնալ և տեղ բռնել իր կողքին:

Խոսրէվը մի փայրկեան հիացմունքից չը կարողացաւ քայլ առնել: Յետոլ, Ֆաթմալի օգնութեամբ ազատուեց կանացի հագուստից և դողդոջուն մօտ գնաց:

—Մօտ նստիր, ալստեղ... համարձակ և քաշող ժպիտով բռնեց նրա ձեռքից կինը և գրեթէ նստեցրեց իր ծնկների վրայ:

Աղտխինը դուրս գնաց, լետոլ ներս եկաւ ուրիշ երկուսի և սե ստրկուհու հետ, որոնք լուսամուտները փակեցին, բերին խմելիքներ, թէլ, քաղցրեղէն և ձեռները կուրծքերին կանգնած՝ մնացին դռան մօտ:

Խանումը և ոչ իսկ բանի տեղ էր դնում նրանց ներկայութիւնը ու շարունակում էր սիրայիր, նախ մօտ քաշել երիտասարդին, լետոլ նրա այտերը գգուել և հուսկ ուրեմն, առանց ալլեալլութեան՝ գրկեց ու սկսեց համբուրել ամաչող երիտասարդին:

— Դու ինչ որ կարծես ամազում ես, խան... քըրք-  
շաց նա—ալդ ստրուկներից... մի ամաչիլ, նրանք իմ  
շներն են, ուրիշ ոչինչ... Անունդ Մէհակի խան է, չէ...  
— Ալո՞...

— Ալդքան միայն խօսելդ... տղամարդ չես. ուրի-  
շը քո տեղը լինէր, այժմ կը գրկէր, համբոլրներով կը  
ծածկէր ինձ, գեղեցիկ տողեր կասէր, ուրախութիւնից  
կը գժուէր... իսկ գու... կարծես աղջիկ զինես... լաւ,  
ես քեզ օրինակը տամ, խօսել սովորեցնեմ... էլ, գինի  
տուէք:

Եւ երբ աղախիններից երկուսը դուրս էին վազում,  
Ալիշան ոսանեց, կրքոտ կերպով քաշեց դէպի իրեն. ե-  
րիտասարդին, գրկեց ու գոչեց.

— Զուարճացիր և ոչնչից մի քաշուկիլ... իսկ եթէ  
վախենում ես, կասեմ քեզ որ առանց իմ հրամանի ոչ  
ոք, լսում ես, նոյն իսկ տանտէրը ոտք կոխել չէ  
կարող այս բացը...

Ապա գրկած երիտասարդին, դարձաւ ֆաթմալին  
ու ասաց

— Նիրինի (քաղցրեղէն)... կանչիր Զոհալին և  
թող թառը (նուագարանը) բերէ...

Եւ այսպէս, հարեմխանալի կրքոտ կինը ամէն բան  
արաւ շփոթուած ու ամազող երիտասարդին համար-  
ձակութիւն ներշնչելու համար:

Ցետոյ, երբ երկար, գգուանքները փոխադարձ էին  
ակսում գառնալ, երբ գինին ու երաժշտութիւն էր  
գալիս, երգ, պար, քրքիջ ու զուարճութիւնը ողողում  
էին սենեակը, Խոսրէվը արդէն լիովին մոռացել էր  
վախն ու ամօթը և համարձակ, արբշիռ կերպով ընկղ-  
մում էր հեշտութեան մէջ:

Ալիշէ խանումը կատարելապէս արբեցնում էր նը-  
րան «երկու շրթունքներով—բաժակի և իրեն»: Պարզ էր  
որ վարժ էր նա ալդ բոլորին: Աղախիններն իսկ ժափ-  
տով և սովորած, դիտում էին իրենց խանումի նոյն  
իսկ չափազանց համարձակ, լկտիութեան հասնող գգու-  
անքներն ու շարժուածքները:

Ամէն ինչ շատ լաւ էր գնում. խանումը արբե-  
նում էր, արբեցնելով Խոսրէվին. հեշտասիրական ծալ-

բահեղ ցոլցերի մէջ՝ մի աղախինը նուագում էր, երկրորդը երգում դիմացնին, գետնի վրայ միմեանց ետեից սփորց էին կազմում կերակուրներ, քաղցրեղէնց օշարակ և ալլն, դրսում սկսում էր մթնել. ժամանակը սահում էր աննշմարելի:

Եւ անշուշտ Խոսրէվը իր կեանքի մէջ գուցէ առաջին և վերջին անգամ լիուլի՛ կը ճաշակէր երազած գերբոյն հաճուքը, եթէ տեղի չունենար մի ինքնըստինքեան շատ սովորական, բայց չարագուշակ հետեանքունեցող գէպք:

Որտեղից որ էր, երեսի մօտակալքում գտնուող մի մզկիթի մինարէի վրալից, յանկարծ ներս խուժեց մի բարձր, հնչեղ ձախն, որ զիլ ձախով կանչում էր.

— Ալլահ աքպէ՛ր...

Երեկոյեան ազանն էր, Հաւատացեալ իսլամներին երեկոյեան աղօթքի հրաւիրող մեծագոչ ձախնը:

Թէև արբած, բայց Ալիշէ խանումը նստեց, ձեռքը դէմքին քսեց ու ասաց բարձրաձախն

— Ալլահ աքպէ՛ր... Ֆաթմա, չը մոռանանք ճըշմարիտ միւսիլմանի պարտաւորութիւնները... Փուիր այն կողմ խալիք-նամազը (գորդ աղօթքի համար) և ես ու Շահզադէն կը կատարենք մեր երեկոյեան աղօթքը... գնացէք դուք էլ...

Աղախինները ցած գրին ամէն ինչ և դուրս գնացին, Ֆաթման բարեպաշտութեամբ փոեց փոքրիկ գորգը մի ինչ որ մետաքսէ փոքրիկ քսակից հանեց սուրբ հոգից շինած փոքրիկ քարը, դրեց նրա վրայ և դուրս գնաց:

— Միասին աղօթենք, խան, դարձաւ Ալիշէն Խոբէվին:

Երիտասարդը լուռ, լրջացած ու շփոթուած՝ չը գիտէր ինչ ասել կամ անել: Որպէս կրակապաշտ պարսիկ, նա ոչ միայն չէր աղօթելու, ալլ պիտի ջանաբներկալ չը լինել մահմեդականի աղօթքին:

Ալդ շուարումը Ալիշէի ժակետը շարժեց.

— Երեսի դու էլ մեր ալժմեան ջահինների պիտի շատ նախանձախնդիր չես... բայց գիտես, ես մօշտէլիկի աղջիկ եմ... և եթէ ուզում ես սիրուել ինձնից,

ունենալ ինձ... առաջ աղօթիր... Յետու էլի կը զուար-  
ճանանք:

Խոսրէվը մնաց անշարժ և զգաց որ գունատ-  
ւում էր:

— Միթէ ալդքան խաթոյ չը շահեցի քեզ մօտ. մօտե-  
ցաւ նրան Ալիշէն, գրկեց ու սկսեց գգուել—իմ խաթ-  
րի համար... դէհ, ապա... միւսիլման դարձնեմ քեզ...  
կտտակ մի կարծիր որ մոշտէլիդի աղջկալ սիրականն ես...

Երիտասարդի դէմքը կծկուեց և նա ոտքի ելաւ  
ու գունատ մռմւաց.

— Զեմ կարող...

— Զեմ կարող... զարմացաւ կինը—չես կարող...  
մայրդ ու հայրդ ուրեմն քեզ չեն սովորեցրել աղօթելը:

— Ոչ, չեն սովորեցրել... շտապեց ասել երիտա-  
սարդը՝ կասչելով այդ պատրուակից:

Ալիշան ուրախ ծիծաղեց: Դիմադրութիւնը բորբո-  
քեցնում էր նրան:

— Ա՛յ քեզ բան... ասաց նա — ուրեմն ոչ միայն  
պիտի ինձ մօտ սովորես սիրել և զուարճանալ, ալլ և  
աղօթելը... սա խօ պարձանք եղաւ ինձ համար... Ա-  
պա, մօտ եկ և ինձ նման արա... ես քեզ աղօթելն  
էլ սովորեցնեմ:

Դրութիւնը անելանելի էր: Մի վալրկեան, միայն  
մի վարկեան Խոսրէվը մտածեց անել ամէն ինչ, կեղ-  
ծել, որպէս խաղ, որպէս առերեսս դերասանութիւն,  
զգալով որ շատ վատ բան էր լինելու եթէ չը կատա-  
րէր գեղեցիկ կնոջ կամքը: Բայց այդ վարկեանը երկար  
չը տեսեց: Մօր, իր շատ սիրելի մօր հրաշալի դէմքը,  
հեզ և սիրող հայեացքը պատկերացաւ դիմացը. իր հօր-  
պատուէրները, իր կրօնի ազատ, մեծ և վսեմ վարդա-  
պետութիւնը լիշեց, և, երբ Ալիշէն ուզում էր քարշ  
տալ նրան դէպի գորգը, ցնցեց գլուխն ու ալս անդամ  
վճռականօրէն ասաց.

— Ո՛չ. չեմ կարող... չեմ ուզում...

Ալիշէն ևս առ ևս զարմացած՝ թողեց նրա թեր  
և հետաքրքրուած՝ հարցրեց.

— Բայց ինչո՞ւ, դու միւսիլման չես, դու կոա-  
պաշտ, հրէալ, քրիստոնեալ ես.... դու շահզադէ չես.

միթէ, քո հայրդ ու մալրդ անհաւատներ են... և  
ալդպէս ձևացնում ես քեզ իմ առաջ... երեխալ մի  
լինիր... եթէ ասեմ որ գրկիր ինձ, համբուրիր, եթէ  
ասեմ որ ոտներս համբուրիր...»

— Ուրախութեամբ... բայց միւսիլմանի աղօթք  
ոչ...

— Ինչպէս... դէմքը կնճռեց Ալիշան—ուրեմն ի-  
րաւ, դու միւսիլման չես... գուցէ բարի ես դու...  
խօսիր, շուտ, ինչ ես դու...

Ու մի քալլ հեռանալով, սպառնալից, նալեց նրան:  
Երիտասարդը կոթնեց պատին և լուռ մնաց:

— Խօսիր, ճշաց Ալիշէն—ասա, ում էր արդեօք  
որ համբուրեցի, գգուեցի. մի միւսիլմանի, թէ մի ան-  
հաւատ շան, մի բարիի կամ... Խօսիր, եթէ ուզում ես  
որ շարունակեմ քեզ սիրել, եթէ չես ուզում որ զըդ-  
ջամ, պղծուած համարեմ ինձ...

Խոսրէվը մի քալլ արաւ դէպի դուռը և ասաց  
դողդոջուն.

— Թոլլ տուր ինձ հեռանալ... շնորհակալ եմ սի-  
րուցդ... բայց... հրամալիր ինձ գուրս տանել ալստե-  
ղից... մեղաւոր եմ որ գրաւուեցի, եկալ...

— Ա!, ոչ... դու ինձ հետաքրքրում ես... եսքեզ  
ուզում եմ, հասկանո՞ւմ ես, ուզում եմ ամբողջ հոգո-  
վըս... ես միայն այսօրուալ համար չէ որ սիրում եմ  
քեզ, ես ուզում եմ որ դու իմը լինես միշտ... ամէ՛ն  
օր... դու միշտ պիտի գաս ինձ մօտ... ես ֆաթմալին  
կասեմ որ տունդ ճանաչի և ամէն անդամ երբ յարմար  
գտնեմ՝ գաս ինձ մօտ... ոչ, ես քեզ նման սիրունը  
չեմ տեսել, քեզ պէս ոչ ոքի չեմ սիրել... հասկանո՞ւմ  
ես...

Եւ այս ասելով, կրքոտ, տաք երկը պակշոտ շեշ-  
տերով, նա մօտեցել էր, փարուել երիտասարդին, գըգ-  
ւում էր նրան, ջերմ, տուփական համբուրներով ծած-  
կում նրա շրթունքները, ալտերը...

— Ասա.. ասա որ դու միւսիլման ես: Հասկանո՞ւմ  
ես, ես մօշտէիդի աղջիկ եմ, կրօնը ինձ համար մի  
պահանջ է դարձել, ես պիշտ եմ համարում ալն, ինչ  
որ միւսիլմանի չէ, ես շնուն եմ համարում և սատկաց-

Նելու արժանի այն տմէնին, ով միւսիլման չէ... իսո-  
սիր, ինչ ես գու... եթէ միւսիլման ես, աղօթիր ինձ  
հետ... ըստ գիտես՝ սովորեցնում եմ... իմ խաթրի, իմ  
սիրոյ համար... արա ուզածս և պիտի տեսնես որ ոչ  
մի կին ինձ նման չէ սիրել և չի սիրիլ քեզ... աղ-  
քատ ես—քեզ ոսկիներով կը լեցնեմ... պատուի ես  
ցանկանում—քեզ պալատ կը մտցնել տամ... խօսիր,  
ասս միայն որ գու միւսիլման ես...

Յետոյ մէկէն, թողեց նրան գրկից, կանգնեց քիչ  
հեռու և աւելի հանդարտ ձայնով ասաց.

—Լաւ ուրեմն, մի աղօթիլ, ոչինչ... չեմ ուզում...

Խոսրէվը ազատ շունչ առաւ: Բայց շտապեց, որով.  
Հետեւ Ալիշան խորունկ և խիստ ձայնով շարունակեց.

—Սակայն—ասաց նա—ամէն միւսիլման իր որդուն  
փոքրութիւնից սովորեցնում է մի բան, մի գերագոյն  
բան, որ ապացուցանում է իսկամ լինելը... Արտասա-  
նիր ինձ քէլէմէյի շահաղաթը (վկալութեան խօսքերը)  
և մի աղօթիլ ու ես քոնն եմ ընդ միշտ... Արտա-  
սանիր...

Եւ ձեռքը պարզած՝ լուրջ սպասեց:

Երիտասարդը աւելի ևս գունատուեց:

—Ասա... գոչեց խստութեամբ Ալիշէն—ասա ինձ  
հետ. «Ալլահիլահուլ-ուլլահ»... կրկնիր... Մոհամէդը  
ըասուլ-ուլլահ, Ալիշմ վէլիուլլահ... Չես արտասանում...  
ահ... գու միւսիլման չես ուրեմն...

Եւ կատաղի, սուսնելով գէպի նա, բռնեց նրա  
երկու ուսագլուխներից ու ճչաց.

—Ի՞նչ ես գու ուրեմն. քրիստոնեալ... հրէալ...

Ալլ ևս անհնար էլ ծածկուել և Խոսրէվը մեռե-  
լատիպ, երերուն և սոսկումից թուլացած, ասաց.

—Ես գէքը <sup>1)</sup> եմ:

—Գէքը... Անէնք... պիղծ, տասնհազար անդամ  
անիծեալ, շնուն, աղտոտ գէքը .. Անէնք, անէնք...

Յետոյ ետ քաշուեց, թքեց, մի վարկեան կատաղի  
աչքերով նայեց նրան ու մէկէն, արագ վճռականու-  
թեամբ վազեց գէպի սենեակի մի կողմը՝ գոռալով.

<sup>1)</sup> Կրակապաշտ պարսիկ:

— Ի՞նչ, մի գէ՛րը համբուրի, գդուի մօշտէյիղի  
աղջկալ... մի շուն անհաւատ ախտեղ մտնի և կեն-  
դանի գուրս գալ...

Խոսրէվը զգաց որ ամէն ինչ վերջացել էր և նը-  
րան հարկաւոր էր մի կերպ գուրս նետուել այդտեղից  
ու արագ կերպով վազեց դէպի դոււրը։ Ալիշէի ճիշը,  
լսուած միւս սենեակներից, ներս թափեց աղախիներին,  
որոնք սոսկմամբ տեսան թէ ինչպէս գեղեցիկ տիկինը  
բարձերի տակից քաշում-հանում էր գամասկեան սուր  
դաշունը։

— Խանում, հոգիս... գոչեց ֆաթման փակելով Ա-  
լիշայի դէմը — ինչ եղաւ քեզ...

— Գերը է, գերը է այդ շունը... ճշաց Ալիշան,  
ճգնելով ազատուել նրա ձեռքից — թողէք որ սատկեց-  
նեմ նրան... ես համբուրեցի, գդուեցի մի գերը, ես,  
մոշտէլիդի աղջկս... սիրեցի մի գէրըի ...

Բայց Խոսրէվն արդէն դուրս էր ձգել իրեն սենեա-  
կից, շտապմամբ հագել էր կօշիկները, բագը ոստնել  
ու վազում էր մթան մէջ՝ թագնուելու պարտիզի խուլ  
կողմերում։

Փախչելու ժամանակ նա լսում էր գեռ Ալիշալի  
ճիշը, որ հայշմում էր, հրամարում էր թողնել զար-  
նելու, գոչում էր, բոնել գէրըին, սատկեցնել...

Բայց գէրըը պարտիզի մէջ այս-այն կողմն էր վա-  
զում մի ելք որոնելու։ Պատերը բարձր էին. միտք չը  
կար ծառերի վրայ մագլցեյու։ Ծուտով անշուշտ ճրագ-  
ներ դուրս կը հանէին, մարդիկ կը կանչէին, կը գըտ-  
նէին նրան...։

Պէտք էր խուսափել, ամեն ճիգ գործել՝ դուրս  
գալու այդ սոսկալի որջից։

Եւ նա մի քանի անգամ փորձեց ալս-այն կողմը,  
պատերին մօտեցաւ, խոր մթութեան մէջ շօշափեց ա-  
մեն ինչ, փորձեց ելքի դուռը գտնել. գիտէր որ ալ-  
տեղ մի ծառալ կար, բայց և գիտէր որ դժուար չէր  
լինիլ լաղթել նրան, մի կողմը շպրտել և անցնել։

Ալդպէս, այս-այն կողմ վագելուց լետոյ, լանկարծ  
նրա ձեռքը դիպաւ մի դռան։ Նօշափեց փակը, հրեց,  
յետոյ ձեռքը բարձրացրեց դռան վերը, քաշեց կապը

և դուռը ետևի վրայ առանց աղմուկի բացուեց, յետոյ մի ծանր վարագոր դէն հրեց և զարմացմամբ տեսաւ որ փոխանակ փողոցի, գտնուում էր մի ուրիշ աւելի մեծ և պարտիզալից բագի մէջ:

Դուռը բացուելու ուրախութեանը յաջորդեց վհատութիւն: Զգաց որ ոյժերը թողնում էին իրեն և տեղն ի տեղը կքւեց մի ծառի տակ: Բագի մէջ խոր լռութիւն էր տիրում, բայց սենեակների մեծ, գոյնզգոյն լուսամուտներից երևում էին ներսի ճրագները:

Ալդպէս մնալը երկար չէր կարող տեսել և երիտասարդը ուղղուեց ու մի ճար մտածեց: Նախ շուրջը նաւեց, յետոյ յանկարծ լիշելով որ կարող էին ճրագներ հանել իրեն որոնելու, խարխափելով նորից բագի ալս այն կողմը գնաց և դուռը որոնեց:

Ալդ միջոցին էր, որ բագի միւս կողմից ճռչաց մի դուռ, յետոյ վարկենսապէս դուրս ելնող լուսի մէջ երևաց մի մարդ, որ զգուշութեամբ իշնում էր, աշխատում ոտնաձայն չը հանել և քալլում դէպի բագի ամենաբարձր շէնքը:

— Անշուշտ դուռը այն կողմն է, մտածեց Խոսրէվը և ոտի ծալրերով հետևեց նրան:

Մարդը մտաւ շէնքի մէջ, երաւ սանդուխքներից, ամենայն զգուշութեամբ բաց արաւ մի դուռ և ներս մտաւ մի մութ տեղ, ուր այլ ևս նրա ոտների ձայնը չէր լսում, գորգեր փոած լինելուն համար: Խոսրէվը ջանաց աչքից չը կօրցնել նրան: Մարդը բաց արաւ մի ուրիշ դուռ և կամենում էր մանել այնտեղ, երբ յանկարծ, երկի լսեց ոտնաձայն իր ետևից, կանգ առաւ, դարձաւ ու կծկուեց խաւարի մէջ:

Խոսրէվն էլ կանգ առաւ: Երկար, երկուսն էլ շունչերնին պահելով՝ մնացին անշարժ, յետոյ մարդը զգուշութեամբ գնաց դէպի դուռը, և աշխատեց բանալ անձայն: Խոսրէվը շարժուեց: Ալդ շարժումը բաւական եղաւ: Մարդը իսկոյն թողեց դուռը, ոստնեց դէպի նա, բռնեց թերից և ասաց խռպոտ ձայնով.

— Ո՞վ ես դու, ասա, թէ չէ իսկոյն կսպանեմ:

Խոսրէվը ուժգնութեամբ ցնցեց նրան և նոյնպէս ցած ձայնով ասաց.

— Իսկ դու ովես... ինձ սպանելու համար նախքեզ նման թողլ չը պիտի լինել և լետոյ, տես...

Ու արագութեամբ վերարկուի ետևից մի դաշոյն հանելով, ծալը պարզեց գէպի մարդը:

— Դու ներքինի կամ ծառալ չես ուրեմն. հարցեց սա—և օտար ես... իսկ ինչ գործ ունիս հարեմ-իսանալի մէջ:

— Իսկ դու եթէ տանուտէրն ես, ինչո՞ւ ալդքան զգուշութեամբ ես դուրս գնում հարեմխանալից. դո՞ւ էլ ուրեմն օտար ես:

Մարդը լրութեամբ մի շարժում գործեց, լետոյ լանկարծ լսուեց մի շփումն և վառուեց մի լուցկի:

Երկուսն էլ նալեցին միմեանց: Խոսրէվի դիմաց կանգնել էր իրեն հասակի մի պատանի:

— Ա!... արեց պատանին—ահա թէ ինչ. հօրս կա-նալք սիրականներ են մտցնում ներս:

— Եւ դու հօրդ կանանց մօտից ես դուրս գալիս գիշերով:

— Ես մօրս մօտ էի:

— Ստում ես. մօրդ մօտ՝ առանց ներքինի իմա-նալուն և մօրդ մօտից՝ ալդպէս ծածուկ... Դու հօրդ հարճերից մէկի մօտն էիր...

— Թողլ լինի... բայց դու կը մեռնես, իսկ ես ալս գունից լետոյ ըիրունը կանցնեմ...

Աւ լուցկին մարեց: Պատանին ոտքը զերցըց գնա-լու: Վճռական ըոպէ էր: Խոսրէվը հասկացաւ որ պա-տանին եթէ մի աղաղակ հանէր, իր վերջին ըոպէն հա-սել էր: Ուստի և արագ վճռականութեամբ՝ ամուր բոնեց պատանու թևից, դաշոյնը դրեց նրա կուրծքին և ասաց.

— Եթէ մի քալլ ևս արել ես, կը զարնեմ:

— Ալդպէս, գոչեց պատանին—լաւ ուրեմն...

Եւ մի արագ շարժումով մերկացրած դաշոյնը դէմ տուաւ, նրանով մինչև իսկ քիչ ծակեց Խոսրէվին:

Մթան մէջ այն ժամանակ տեղի ունեցաւ մի կա-տաղի կոիւ երկու երիտասարդների մէջ: Խոսրէվը չէր ուզում զարնել, այլ աշխատում էր մի կերպ ազատուել հարուածներից. լետոյ մի լարմար ըոպէում ետ-ետ գը-

նաց, հրեց գուռը և իրեն գտաւ մի լալն սրահի մէջ,  
որից յետոյ երևում էր լայն բագը և դիմացը՝ փողոցի  
դուռը՝ լուսաւորուած լապտերներով:

Եւ մինչ պատանին վազում էր նրա ետևից գոռա-  
լով, Խոսրէվը ոստնեց դէպի բագ և վազեց փողոց:  
Պատանին պնդեց նրա ետևից անդադար գոռալով.

— Բոնեցէք մարդասպանին, գողին...

Ծառաները երևի կամ քնած էին և կամ զբաղ-  
ուած, որովհետև մինչև որ գուներ կը բացուէին, մին-  
չև որ աղմուկ և շարժում կը լառաջանար, Խոսրէվը  
փողոց էր մտել և վազում էր սաստիկ արագութեամբ,  
իսկ պատանին էլ նրա ետևից:

Բանն այն է, որ պատանին իսկոյն իր նախանձի  
գրդմամբ մտածել էր թէ անշուշտ դա իր սիրուհու  
մի ուրիշ սիրեկանը պիտի լինէր, իր հակառակորդը,  
որ այժմ տեսել էր ամեն բան և եթէ կենդանի մնար,  
կարող էր հօրը պատմել և ով գիտէ ինչեր կը ծագէին  
գրանից:

Ու նոյն արագութեամբ, մթան մէջ պնդեց նրա  
ետևից: Քիչ յետոյ երկուսն էլ դուրս գնացին մի նեղ  
փողոց, այնտեղից Խոսրէվը ոստնեց մի աւերակի մէջ  
և ջանաց խուսափել, մտածելով որ ծառաները սրերով  
ետևիցն էին ընկել:

Բայց ծառաները գեռ հազիւ փողոցի գուռը ելած,  
չէին իսկ տեսել թէ ալդ ինչ փախչողներ էին և ուր  
անհետացան:

Աւերակի մէջ, Խոսրէվը գալթեց, ընկաւ, յուսա-  
հատաբար մտածեց որ հասել էր մեռնելու բոպէն, բայց  
երբ մեքենայօրէն դառնալով տեսաւ որ ետևից եկողը  
միայն պատանին էր, անմիջապէս կանգ առաւ, մտաւ  
մի պատի ետև, թողեց որ մօտենար և երբ հասել էր,  
ձեռքի քարովը ալնպէս խփեց նրան, որ պատանին  
ընկաւ:

Խոսրէվը այն ժամանակ փորձեց փախչել, բայց  
պատանին բռնել էր նրա ոտքը ընկնելիս և հար-  
հոյում էր:

Պէտք էր վերջ տալ ալդ բոլորին, կարող էին ձար-  
ները լսել: Կոացաւ, սեղմեց պատանու կոկորդը, յետոյ

դաշոլնը բարձրացրեց, ուժգնութեամբ մինչև դաստապանը խրեց նրա կուրծքը, սոսկումով ցատկեց ու դուրս թռաւ աւերակներից:

Ու առանց ետ նալելու, կարծես դարձեալ պնդում էին ետևից, մազերը ցցուած, աչքերն արիւնով լի, փոշոտ ու զառանցանքի մէջ լինողի նման՝ վազեց ու վազեց, ինքն էլ չը գիտենալով թէ ուր էր գնում և կամ որտեղ էր գտնւում...

## VII

Այիշէի խանումին տենդախին զառանցանքների մէջ անկողին էին մտցրել ուժով: Աղախինները երկու ժայ էր որ ճգնում էին նրան հանդարտեցնել, ուշքի բերել, բայց նա անընդհատ ճշում էր, դաշոլնն էր ու զում, երիտասարդին կանչում...

Մինչ ալդ, լանկարծ, գիշերային լուսւթեան մէջ հեռուեց լսուեց մի երկար աղաղակ որ եկաւ ցնցելու բոլորին:

Ֆաթման ոտքի ելաւ խանումի սնարի մօտից և ասաց.

—Ի՞նչ է ալն:

Ցետու դարձաւ միւս աղախիններին և հարցրեց.

—Գտածք անպիտանին:

—Զը գտանք... մտել է միւս հարեմիանէն:

—Կորսուեցանք... ձեռքերը գլխին խփեց ֆաթման—երևի ալդ նրա ձայնն էր, ներքինիները սպանեցին նրան... Նուա փակէք միջին դուռը և ուրացէք, հասկանում էք, ուրացէք որ այստեղ տղամարդ մտած լինի:

Բայց, ինչպէս երևաց, և' դռնապանը իր քնած տեղից, և' միւս բագի կանալք, ներքինին ու ծառաները, ալլ և զիրունի<sup>1)</sup> աղաները լսել էին նոյն աղաղակը, որովհետև իսկոյն մի մեծ շարժում լառաջացաւ ամբողջ տան մէջ:

<sup>1)</sup> Ցղամարդկանց մասը բնակարանի մէջ: Կանանց մասը կոչում է էնդէրուն: Բառացի նշանակութեամբ՝ բիրուն—դուրս և էնդէրուն—ներս:

Դռնապանը ներս վաղեց, միւս բագից դուռը ծեցին, լսուցան ծառաների իրարանցում, միմեանց կանչելը, աղաների բարձրաձայն հարցերը...

Քիչ լետոյ գարձեալ, և, այս անգամ աւելի մօտից, լսուց նոյն աղաղակը: Այնքան նա մեծ էր ու կատազի, որ ամէն դէմք գունատուց:

Վաղուց էր որ ամենքը գիտէին թէ ինչեր էին կատարւում Պարսկաստանում: Թաւրիզի, Շիրազի և Սպահանի ցոյցերը ծխախոտի մենավաճառութեան դէմ՝ ամենքը լսել էին:

Անշուշտ Թէ՛Հրանումն էլ նոյնն էր կատարւում—մտածեցին Նասրուլլահ խանի տանը: Մի քանի ծառաներ փողոց դուրս թռան, աղաները (Նասրուլլահ խանի եղբարն ու որդիները) տանիքի վրայ բարձրացան վերաբկուվ և սպիտակ անդրավարտիկներով, իսկ հարեմանալի առաջին բագի կանալք ներքինին ուղարկեցին ըիրուն՝ իմանալու եղածը:

—Մենավաճառի դէմ է, հանգարտեցէք... լորդոցեց նա կանանց:

Բայց երրորդ անգամ աղաղակն արդէն մօտենում էր և տանիքի վրայ կանգնած աղաներից մէկը—լաւ լսեցին նաև կանալք ու ծառաները—կանչեց.

—Այս կողմն են գալիս... բայց ինչո՞ւ, բնչ կայ այս կողմը...

Եւ իրարանցումը տան մէջ սաստկացաւ: Մարդիկ գիտէին որ ժողովուրդը զարպացած էր նաև պաշտօնէութեան, և մենավաճառը օտարներին տուող պալտականների դէմ: Նասրուլլահ խանը Շահի գանձապահներէն մէկն էր: Զը լինէ արդէն ժողովրդի կատաղութիւնը ալն կէտին էր հասել, որ մտադիր էին մեծ պաշտօնեանների տների վրայ լարձակուել:

—Այս կողմն են գալիս... կանչեց փողոցից մի ձալն ևս:

—Հօսէն, Ալի, Աքպէր... ձալնում էր տանիքի աղաներից մէկը կոացած դէպի փողոցը—շներ, ուր էք կորել, եկէք դռները ամրացրէք...

—Մահմադ, դու քաջ ես. ասում էր աղաներից միւսը իր ետևում կանգնած ծառալին— փողոց վազիր,

գնա ալդ աղաղակի կողմը և տես ովքեր են, ուր են  
գնում, ինչ են ուզում...

Ոչ միայն Մահմուգը, այլ և մի քանի ուրիշ ծա-  
ռաներ էլ, յետոյ դրացի տնից ելնելով 4—5 հոգի ես,  
ոմանք ուղղակի պատերից ցած թռնելով՝ վազեցին մը-  
թութեան մէջ, դէպի աղաղակի կողմը:

Աղմուկը նասրուլլահ խանի օթրունի կողմիցն էր  
գալիս—արտաքին մեծ դռան լայն փողոցից, կրկնւում  
էր պարբերաբար ու մօտենում էր հետզհետէ ուժգին,  
աւելի կատաղի դառնալով:

Աղաները առանց կատակի՝ սկսեցին վախենալ: Ո-  
մանք ցած իջան զէնքեր պատրաստելու, իսկ տանու-  
տէրի բացակալութեան ժամանակ նրա եղբայրը, որ հըս-  
կում էր, հրամալեց ծառաներին՝ լամենալին դէպս բո-  
լոր եղբօրորդիներին, կանանց ու երեխաներին իմաց տալ,  
որ եթէ իրաւ, վտանգ լինէր, կարողանալին կողմնակի  
գուներով ազատուել և ուրիշի տները գնալ:

Իրարանցումը մեծանում էր փողոցում: Ամեն տան  
տանիքների վրայ սկսեցին ստուերներ երևալ. փողոցի  
մէջ վազող-վազողի էր:

Տասը ըստէից յետոյ նասրուլլահի խանի ծառանե-  
րից մէկը շնչառապառ տուն էր ընկնում և գոչում.

—Փախէք, մեր տան վրայ են դայիս...  
Այս ձախը բաւական եղաւ շարժելու ամենքին:  
Ճիչ, խառնաշփութութիւն, աղմուկ տիրեց տան բոլոր  
մասերում:

—Խօսիր, հարցնում էր տանտիրոջ եղբայրը գու-  
նատ՝ կանգնած շնչառապառ ծառալի առաջ—ինչ կայ,  
ինչու մեր տան վրայ են դալիս, ինչ ունին...

—Խէսփուշներ են... և որքան ցնցոտի, լօթի որ  
կան քաղաքում... Մի ինչ որ դիմակ ունին հետները...  
Բահերով, կացիններով են դալիս... Հայհոլում են, սպառ-  
նում են բոլոր պաշտօնեաներին, խաներին սպանել,  
տները թալանել...

Եւ իրաւ, փողոցի ծալրից լսում էր նորից այն-  
պիսի սոսկալի օռնոց, որ նասրուլլահ խանի եղբայրը  
տառնեց ու շտապմամբ վազեց հարեմխանալի կողմը:

—Նուտ... գոչեց նա վազելով— ետեի դռներից

դուրս, բոլորդ... փախէք, գալիս են...

Աննկարագըելի թէ ինչ եղաւ յետոյ: Կանայք մռանալով որ առանց սաւանի են, երեսները բաց, շատերը կիսամերկ—ճշալով փախչում էին, ոմն մի արկղեկ կորզած, միւսը շփոթուելուց՝ վերմակ էր քարշ տալիս հետը, աղախինները կաթսաներ էին տանում, ծառաները՝ ինչ որ պատահում էր: Ցատկում էին պատուհաններից, կոխոսում թուփ, բոլս, իրար հրում, տղամարդիկ քիչ էր մնում կոխ տալին կանանց, մի ծառալ մինչև իսկ գէն շպրտեց հարեմիսանալի դռնից անցնող իր խանումներից մէկին և չը նալելով նրա ճիշերին՝ փախաւ...

Երկու երեք հօգի ճգնեցին բանալ Ալիշէ խանումի բագի դուռը. ծեծեցին, բայց անօգուտ: Ներսից փակել էին, որովհետև ալնտեղ էլ իրարանցում էր. զէպի աւերակներն ելնող նեղ դռնից աշխատում էին թանգագին իրեղէններ դուրս կրել աղախինները, իսկ Թաթման և սե ստրկուհին մտած իրենց խանումի երկու թեր, մի սաւանով փաթաթում էին նրան և ճգնում դուրս տանել:

— Ո՛չ, թողէք... դուռում էր Ալիշէն — չեմ գնալ .. ոչ...

Ու ճշում էր, դիմադրում:

Ալդպէս ժամանակ էր ահա, որ փողոցի ծալրում երևացին եկող խուժանի վառուսող կերպները: յետոյ թնդաց կատաղի աղաղակը և խէսփուշներից առաջնորդուած մի ահագին բազմութիւն ցնցոտիների՝ կանգ առաւ նասրուլլահ խանի մեծ դռան առաջ:

Խէսփուշներն այնքան շատ չէին, որքան նրանց հետեւող ցնցոտիները, լոթիները և կատաղի ամբոխը, որ հաւաքուել էին քաղաքի ամեն կողմերից:

Զէր երևում ոչ մի կանոնաւոր հագնուած մարդ, ը կար և կամ ամբոխի մէջ էր ծածկուած Մոլլա-Նէջէֆկուլին, Ամենքից առաջ քալլում էր Սէլիդ Հարիբուլլահը, որ երբեմն, աղաղակները լուելու ժամանակ, դառնում էր, բարձրացնում ձեռքերն ու մի քանի բառով գրգռում հետեւողներին:

Երբ հասել էին նասրուլլահ խանի դռան ալուսթ

ռաջ, ամբոխը կանգ առաւ, կերոնների լոյսով դիա-  
կը դըին գուան առաջ, Սէլիդ Հաբիբուլլահի կանգնեց  
նրա յօտ, ձեռքի կացինով ուժգին հարուածեց գուռը  
և գոռաց.

— Ե՛լ դուք, անհաւատներ, ժողովրդի արիւնը ծը-  
ծող լլընը, բացէք դուռը և տուէք մեզ մարդասպա-  
նին...

— Տուէք մեզ մարդասպանին... կրկնեց ամբոխը:  
Բայց երբ լուռ սպասեցին պահ մի, տան կողմից  
ոչ մի պատասխան դուրս չեկաւ: Այն ժամանակ Սէլի-  
դը դարձաւ ամբոխին և ասաց.

— Ահա, նայեցէք այդ տանը... Ա'լստեղ է այն  
աւազակներից մէկը, որ պղծում է մեր օրէնքը, մեր  
հացն ու ջուրը օտարի ձեռքն է տալիս և նրա պոռ-  
նիկ կանալք սպանում ու դուրս են նետում իրենց որ-  
շերից մեր երիտասարդներին... Յանուն Մեծ Մարգա-  
րէի, ջարդեցէք դուները, թալանեցէք տունը, կոտորե-  
ցէք բոլորին և թող Աստուծոյ օրհնութիւնը ձեզ վը-  
րաւ լինի...

Ասաց, ոստնեց դէպի դուռը, կացնի մի ուժգին  
հարուած տուեց ու ետ քաշուեց...

Բարձրացաւ կատաղի օռնոց բազմաթիւ բերաննե-  
րից, լեռոյ դուռը ճոնչաց հարուածների տակ, փշրուեց  
մի քանի ըոպէի մէջ և ամբոխը միմեանց հընդով ու  
կոխկրտելով ներս ընկաւ...

Այդ խաժամուժի մուտքը հարուստ տան մէջ,  
ջարդն ու թալանը, ուրախ աղաղակներն ու ամանե-  
ղէնների փշրուելը մի սոսկալի տեսարան էր, որ վեր-  
ջանում էր միայն այն ժամանակ, երբ մի հրդէհ, ա-  
մեն կողմից վառած, լուսաւորում էր դատարկ սենեակ-  
ներն ու լզում էր ամեն ինչ՝ որ վառուող էր ընդար-  
ձակ շէնքում:

Տան մէջ ոչ ոք չէր մնացել: Ամբոխը գոհ էր և  
զբաղուած էր թալանով, բայց խէսփուշներն ու Սէլիդ  
Հաբիբուլլահի գոհ չէին: Վերջինս, հարեմխանալի բա-  
գի աւազանի մօտ կանգ առած, սպասում էր տեսնե-  
լու մարդասպանին և կամ սպանուածին իրը վրէժ՝ մի  
քանի դիակներ: Բայց երբ տեսաւ որ արիւն չը կար և

խուժանը իրենց թալանն էր գուրս տանում առանց արիւն թափելու, ելաւ աւազանի կողի վրայ ու մեծա-ձայն գոչեց.

— Ե՛լ, թալանող անպսուններ, որ միմիալն աւարի վրայ ընկնել զիտէք և մոռանում էք վրէժը... Ուր մեր հաւատքը օտարին ծախողի դիակը, ուր է մարդասպանի գլուխը...

— Ոչ ոք չէ մնացել տան մէջ, աղա Սէլիդ, ասաց մօտ կանգնածներից մէկը—փախել են բոլորը...

— Եւ մենք նրանց տունը կրակի տուինք. գոչեց մի խէսփուշ:

— Լաւ ուրեմն... արեց Սէլիդը. իշնելով—բաւա-կան վրէժ առինք, այժմ գնանք ուրիշ կողմ...

Ու առանց մի խիլ իսկ վերցնելու աւարից, Սէլիդ Հարիբուլլահը դուրս եկաւ տնից խէսփուշների գլուխն անցած, որոնք աւարներով բեռնաւորուած՝ ժողովուե-ցան, և ինչպէս մտել էին, այնպէս էլ աղաղակներով դուրս գնացին:

— Գնանք, գոռում էր Սէլիդը կացինը ձեռքին ցնցելով—ժամանակ է բոլոր անհաւատներին ոչնչաց-նելու, ալսօր վրէժի օր է...

Այս վերջին բառերն էին, որ լսուեցան թաղում և խուժանը դուրս գնաց, թողնելով որ հետզետէ մե-ծացող հրդէհը լափէր ամբողջ փողոցի կէսը բռնող շքեղ շէնքը ամեն կողմից...

### VIII

Այս բոլորը պատահում էր աշնան վերջերին, երբ գեռ բոլորովին ձիւն չը կար Թէհրանում, եղանակն էլ տաք էր գարնան պէս:

Քէլբէլալի մեծ մօշտէլիդի հրամանը, որ հաղոր-դում էր Սէլիդ Հաբիբուլլահը խէսփուշներին, միմիալն միւս օրն էր յալտարարում քաղաքի մէջ:

Եւ այդ յալտարարութիւնը, պէտք էր տեսնել, թէ որպիսի ապշեցուցիչ հետեանք ունեցաւ. հետե-անք, որ գուցէ երբէք տեսնուած չէր այդքան որոշ և ոչ մի երկրում:

Հազիւ թէ մի խումբ մոլլաներ ու սէլիդներ թէ մզկիթների, թէ հրապարակների և թէ՝ շուկաների մէջ համարձակ ու բարձրաձայն հազորդում էին ալդ հրամանը, որ անմիջապէս և միահամուռ բոլոր ծխախոտ վաճառողները դրդիւնով կողպեցին իրենց խանութները, բոլոր զայլունները ցոյցանման՝ փշուեցին կամ մի կողմ գրուեցան, ամէն պապիրոս գետին ընկաւ ու տրորուեց և ամէն, բացարձակապէս ամէն՝ մարդ դադարեց ծխելուց:

Մենավաճառը վեւացնելու համար էր մօշտէլիդի ալդ առաջարկած, հրամալած ծալրագոյն միջոցը:

Ոչ միայն շուկաներում հրամանը ալդպիսի լանկարծական, հետեւանք առաջացրեց, այլ շուտով մօշտէլիդի պատուէրը կալծակի արագութեամբ մտաւ նոյն իսկ Շահի հարեմինան, ուր նոյնպէս փշուեցան ծխափողներն ու դէլլունները. Շահի՝ իրեն շրջապատում անգամ դադարեցին ծխելուց, թէև զգուշացան ցոյց անելու ձեւով նետել պապիրոսները, ոտի տակ տրորել ծխախոտ, փշուել դէլլուններ — ինչպէս ալդ անում էին ամէն փողոցի մէջ, շուկալի ամէն խանութ, ամէն անկիւն...

Մեծ մօշտէլիդի հրամանի տարածուելու և ժողովրդի ցոյցը մի հինգշաբթի օր էր:

Ալդ օրն իսկ քաղաք պիտի մտցնէին Խէլարդէշտում բոնուած ապստամբ Սէլիդին, որին Սէլմզգիր անունն էին տալիս, և որ յայտնի կերպով քարոզել էր ապստամբութիւն կրօնը պղծող պետութեան դէմ, կիտել էր իր գլխին հարիւրաւոր մոլեաանդների ու ճանապարհի վրայ արիւն և աւեր սփուելով մայրաքաղաքի վրալ էր ուզում գալ:

Նասրէդգին շահը իր սովորական արագ վճռականութեամբ իսկոյն մի վաշտ զօրք էր ուղարկել, ապշտամբները ջարդուել էին, Սէլիդ Սէլմզգիրը բռնուել և ալդ օր՝ հանդիսով քաղաք էր բերւում:

Վաղ առաւօտեանից ամէնքը շահապում էին թօփի խանէի հրապարակը՝ ապստամբ գերիի մուտքը տեսնելու:

Սակայն և ալդ օրը կատարւում էր թօփիխանէի մօտ գտնող կրթութեան հրապարակում՝ սովորական շաբաթական զօրահանդէսը:

Նըշապատուած մի ստուար շքախմբով, թագաւորի որդին, որ զօրաց ընդհանուր հրամանատարն էր, Դէ-ըլմաս ծառուղու դարբասից արդէն երևում էր: Դռան կողքին շարուած տասնի չափ թնդանօթաձիգ սուսերամերկ պահակներ անմիջապէս բարեւ բռնեցին, վեց շեփորներ կերկերացին և արքայորդին ծանրաքալլ, մեծաւորական ակնարկներ նետելով ամէն կողմ, անցաւ խոնարհած գլուխների միջով ու քալեց դէպի կրթութեան հրապարակը:

Բայց այդ ենչ ալլանդակ խաժամուժ էր, որ խըռ-նուած՝ սպասում էր Դէրուէզա Ղազուին դարպասի կողքին:

Կիսամերկ, ցնցոտի, հաշմանդամ կանալք, մանուկ-ներ, ծերեր ու երիտասարդներ վիրալից դէմքով, բո-բիկ ու աղտոտ, բռնել էին խոռնուած ամբոխի երկու շարքի առաջ: Հրում-հրմշտկում էին միմեանց, ոտնա-տակ տալիս թուլերի, աշխատում էին իրար առաջ կանգ-նել, միմեանց ետ թողնել...

Պարզուեցին ձեռքեր, երբ աղան մտաւ շարքի մէջ, բարձրացան աղաղակներ: Ֆէրրաշները, որոնք քայ-լում էին առջևից, աշխատեցին իրենց երկար փալտերով ետ մղել նրանց, կանալք խոպոտ ձայնով ճշացին... և արքայորդին ստիպուեց անցնել նրանց միջով:

Զը նալելով կատարուող լուզումներին, Թէհրանի բազմաթիւ մուրացիկները այդ օրն իսկ չտին կամեցել կորցնել, և, ինչպէս սովորութիւն էր դարձել, քաղաքի ամեն կողմերից, լուսածագից առաջ անգամ կիտուել էին այդտեղ աղայիշ անցնելուն սպասելով, որովհետեւ արքայորդին էլ սովորութիւն էր դարձել անցնելիս միշտ նրանց մի բուռը դրամ նետել:

Դա սովորական բան էր և մուրացիկներից բացի, շատ քիչ մարդիկ էին առ հաստրակ հաւաքւում հինգ-շաբթի օրերը արքայորդու անցնելու ճանապարհի վրայ:

Բայց այդ օրը, բացի մուրացիկներից, հրապարակի վեց դարբասներից կոյտ առ կոյտ ներս էր լցւում բազ-մութիւնը, տեղ բռնում դատարկ կողմերը և սպասում Ալէմգիրի բերելուն:

Սկզբում, քանի դեռ «աղան» չէր անցել, ամբո-

և արքալորդու անցած ճանապարհի վրայ շարուած մուրացիկներին պահակները զսպուած էին պահում։ Խսկ երբ անցաւ, գրեթէ վազն ի վաղ սահեց նա այդ ալլանդակ շարքի միջով, նետեց աջ ու ահեակ մի քանի բուռք գրամ—այն ժամանակ պահակները ետք շուեցին և տեղի ունեցաւ մի խալտառակ խառնուրդ։

Գետին ընկնող իւրաքանչիւր գրամի վրայ նետուել էին տասնեակ մուրացիկներ՝ կին, տղալ, ծեր, երիտասարդ խառնուել էին իրար ահռելի և միանդամալն զզուելի կատաղութեամբ։ Թաւալում էին ցեխի մէջ, բռունցքներով ծեծում, խածնում էին, ոտնատակ տալիս իրար... ձիչ, հալհոյանք, օռնոց, աղմուկ...»

Կանանց ցնցոտի սաւանները ընկել էին, տղայք, խրուած ցեխի մէջ՝ ոտնատակ էին գնում։ — Մի կողմում մի երիտասարդ գետին էր տապալել մի կնոջ և աշխատում էր նրա բռան մէջ եղած դրամը կորզել։ Կինը գալարում էր, հալհոյում, կծոտում. երիտասարդ, գը հարուածում էր, գզգզում։ Մի ուրիշ կողմ երկու ոտարքիկ ծերունիներ ճգնում էին հասնել՝ մարդկանց ոտների միջով սպրտող պատանուն, որ լաջողուել էր բաւական դրամ ժողովել ու փախչել։ — Մի այլ տեղ՝ երկու կանայք պատին էին սեղմել մի ծերունու, ճշում էին որ շատ էր ժողովել և որ իրենք կիսամերկ էին, որ այդ գծունքը չը պէտք է զրկէր իրենց։ Ապտակ, կսմիթ, թոռք ու ցեխ էին կարկտում նրա վրայ. իսկ ծերունին անդրդուելի, բռունցքը գրպանի մէջ դրամով, լուռ՝ թոռլ էր տալիս որ ծեծեն, բզկտեն իրեն, բայց ոչ փախչում էր և ոչ էլ ձեռքը գրպանից հանում...

Դժել էր ամբոխը իր զուարճութիւնը։ Եւ մարդիկ, ոչ խսկ մտածելով միջամտելու, հեռու կանգնած՝ քըրքջում էին, լաղթողին քաջալերում կանչերով, ծեծուողին ծաղրում սուր խօսքերով։

Մարդկային խորին, ահաւոր թշուառութեան այդ տեսարանը, ստամոքսալին անասնական ալդ կոիւը ժամանց էր սպասող ամբոխի համար։

Ոչ ոք տեղիցը չը շարժուեց, մի քանի, աւելի այդպիսի բաների սիրահարները, մօտեցել զննում էին, մինչև որ վերջ ի վերջոյ պահակների սպաներից մէկը.

գոռաց մուրացիկներին.

— Դէ՛հ, բաւական է, անամօթներ, կորսուէք գնացէք...

— Թողէ՛ք, ձայնեց նրան ամբոխից մէկը—մեզ զուարճացնում են:

Մուրացիկները և ոչ իսկ ուշադրութիւն դարձրին սպալին, զօրքերն էլ փորձեցին քշել նրանց, գոնէ բաժանել կոռուպոներին, բայց հայհոյանք միայն ստացան: Նոյն բանին արժանացաւ նաև հրապարակի կարգապահ Հօսէննայիբը, որ փայտը ձեռքին գորգուալով մօտ վազեց ու սրա-նրա մէջքին հարուածներ իշեցրեց...

Եւ գուցէ գեռ երկար շարունակուէր այդ, եթէ լանկարծ չը լսուէր Լալազարի կողմից երաժշտութեան ձայն, յետոյ մի աղմուկ, որ ալիձև տարածուեց ամբողջ հրապարակում.

— Բերում են, բերում են...

Մուրացիկները իսկոյն ոտքի ելան, ամբոխը սեղմուեց գէպի Լալազարի բերանը և վարկենապէս ամեն ինչ լոեց:

Դարպասից մտնում էր նտիս երաժշտութիւնը, որ նուագում էին պարսկական կօզակները, յետոյ երևացին 50 ալլ կօզակներ իրենց գնդապետի հետ և հուսկ ուրեմն, հարիւրի չափ փոշոտ, աղտոտ, գինուորների մէջ տեղում՝ երևաց սպիտակ ձիու վրայ նստեցրած ապրատամբը, որի ձեռքերը կտպուած ետևից՝ շղթան բռնել էր մի սպալ, իսկ ոտները ամրացրած էին ձիու փորի տակ:

Երիտասարդ մարդ էր. չը նայելով սպիտակ հագուստի վրայ դրոշմուած ցեխին և փոշուն, չը նայելով կապոյտ փաթոթի կեղաներին և գզգզուած դրութեանը, նրա դէմքը պարզ երևում էր լուսաւորող արևի մէջ:

Ամբոխը սառած, լարուած հետաքրքրութիւնից՝ դիտում էր այդ դէմքը: Սէլիդը ուղղաձիգ, սառը և անտարբեր նայում էր ուղիղ իր առաջ և մի տիուր, բայց արհամարհական ժպիտ խաղում էր նրա կիսարաց շրթունքների վրայ:

Աւսզանի մօտ երաժշտութիւնը լոեց, ամբոխը ետ

քաշուեց և կօզակների խումբը եր գերիի հետ մտան  
Ինչը-էլմաս ծառուղին։ Ժողովուրդը խոնուեց այն կողմ,  
դարձեալ աղմուկ բարձրացաւ և ամբողջ լայն փողոցը  
մինչև պալատի դուռը, ապստամբը և ոչ իսկ ու է  
քաջալերական բառ լսեց ամբոխից։

Սակայն երբ Շահի մզկիթի առաջից ծուռմ էին,  
այստեղ կատարուեց մի դէպք, որ շանթի ազդեցու-  
թիւն ունեցաւ։

Ցանկարծ մզկիթից դուրս թռաւ մի սպիտակազգեստ  
երկարահասակ սէլիդ, հրեց հրմշտկեց ամբոխին, ոստ-  
նեց պատից դուրս ցցուած պատուանդանի վրայ և դո-  
ռաց գերիին։

— Ողջո՞յն Սէլիդ Միքա—Միզա Ալէմզիրին...

Ալէմզիրը նալեց այն կողմ, գունատուեց, լետոյ  
ժպտաց և ասաց բարձրաձայն։

— Ողջո՞յն, սէլիդ Հաբիրուլլահ, ուրախ եմ որ  
վերջին անգամ տեսնում եմ քեզ... Ես խաղս կորցըի...»

— Իսկ մենք՝ զեռ ոչ... գոչեց Սէլիդ Հաբիրուլլա-  
հը և դառնալով դէպի խոնուող ժողովուրդը, որոտա-  
ցող ձայնով գոչեց։

— Ով սիրում է Աստծուն և նրա Մեծ Մարդարէին,  
յանուն Քէլբէլայի մեծ մօշտէլիդին!...

Իսկոյն ձայները լռեցին և ամբոխը կանգ առաւ։  
Կօզակների գնդապետը ըմբռնեց որ մի նոր բան է կա-  
տարուելու լոգուտ գերիին, անմիջապէս դարձաւ ու  
գոռաց կօզակներին։

— Ցառաջ, վազքով... մտրակեցէ՛ք գերիի ձին...

Բայց Սէլիդ Հաբիրուլլան տեսաւ ալդ, կալծակի  
արագութեամբ նետեց իրեն պատուանդանից ցած և  
պայթելու չափ բարձր ձայնով գոռաց։

— Մի թողնէք, մահմեդականներ, Քէլբէլայի մօշ-  
տէլիդի նաիրն է, որ բռնելսպանել են ուզում...

Այդ խօսքերը բաւական եղան ալէկոծութեան հա-  
մար։ Հազարաւոր ամբոխը գոռհ տուաւ դէպի կօզակ-  
ները, որտեղից որ էր երևան եկան գաւազաններ, սը-  
քեր... Կօզակների մի խումբը մտրակեց ձիերին, միւսը  
նիզակները դէպի ետ՝ դէմ տուին... իսկ Սէլիդ Հաբէ-  
բուլլահը, որ ոտքի էր ելել ընկնելուց, ձեռքերով շե-

Փոր կազմեց բերնի կողքերին և գոռաց դէպի ամբոխը.  
—Հասէ՛ք, խէսփուշներ...

Խսկոյն ամբոխի գլխների վրայով գրեթէ, զանա-  
զան կողմերից գուրս նետուեցին մի խումբ ալլանդակ  
ցնցոտիներ, որոնք վրա տուին կողակներին։ Աղմուկ,  
ճիչ, ոտի տակ ընկնողների աղաղակները, փալտերն ու  
նիզակները, նետուած դաշոյններն ու բռունցքները խառ-  
նուեցին միմեանց ահուելի կատաղութեամբ։

Կողակները, մի սպալի հրամանի վրայ՝ անմիջապէս  
ձիերի գլուխը դարձրին, լետոյ միմեանց սեղմուեցին—  
փողոցի լայնքը բռներով և նիզակները հաւասարապէս  
դէմ տուին խուժող ամբոխի առաջ...

Մինչ այդ, նրանց ետևի կողմում գնդապետը մի  
ուժգին հարուած տուաւ սրի տափակ կողմով Ալէմգի-  
րի ձիու մէջքին, և խումբը գերի հետ սրարշաւ իջան,  
ձիերովն ուղղակի պալատի դռնով ներս ընկան և մեծ  
դարբասը շառաչիւնով փակուեց նրանց ետևից...

Պալատի դռան մօտի պահակները անմիջապէս  
դուրս լեցուեցին, պարսպի վրա երևաց նալիքը—Սալ-  
թանէի գլուխը և չէր անցել տաս-տասնհինգ րոպէ, որ  
ամբոխը ջարդուած, ծակծկոտուած, մինչև իսկ տեղա-  
ցող գնդակներից հալածուած՝ քշուեց երկու կողմից  
պալատի փողոցների մէջ և կէս ժամ լետոյ պալատի  
ամբողջ թաղի դարբասները շառաչիւնով փակում էին  
բոլոր անցորդների առաջ։

Ալէմգիրը կորսուած էր ալ ևս, ժողովուրդը, Սէ-  
յիդ Հաբիբուլլան և սկզբից դարանի կեցած խէսփուշ-  
ները չը կարողացան ազտաել նրան, զնորհիւ տեղին։

Սէյիդ Հաբիբուլլահը տրորուած, հրուած ու ջար-  
դուած դուրս նետուեց ամբոխից և ուշքի եկաւ միայն  
այն ժամանակ, երբ տեսաւ որ Ենդէրունի դռնից դուրս՝  
դժնւում է նասըրի խիավանում։

Կանգ առաւ, լուսահատաբար ձեռքերը ծնկներին  
խփեց և քիչ մնաց լաց լինէր։ Այնքան լաւ պատ-  
րաստուած դաւադրութիւնը, զնորհիւ ամբոխի խունե-  
լուն և այդ պատճառով էլ՝ իր ուշանալուն՝ անլազող  
եղաւ։

Ճգնել էր պատուել ամբոխը մօտ գնալու կողակնե-

ըին, գերիին, բայց ամեն անդամ ետ էր հրել նրան ժողովուրդը իր հեղեղումով և նա հաղիւ հազ, արիւնքրտինք մտած՝ կարողացել էր հասնել կօզակներին Շահի մէշիդի կողքին... և ահա ամեն ինչ այժմ ոչնչացել էր, ժողովուրդը փշրսւել էր տեղի նեղութիւնից, դէմ տուած զօրեղ զինուորական շղթալից և հալածում էր թողնելով պալատ մտցնելու Ալէմզիրին, որտեղից անշուշտ նա ողջ էր գուրս գալու:

Յուսահատաբար կքուեց մի ծառի տակ և ծունկները տրորելով շուրջն էր նայում:

Խէսփուշներն անդամ չը կային: Ամբոխի հոսանքը ցրուել, միմեանցից բաժանել էր նոցա ևս...

## IX

Մինչ այդ, Սէլիդ Ալէմզիրին, որ իսկակէս կոչւմ էր Աղա-Միրզա Ռիզա, մտցին արտաքին բազից գէպի ներս՝ Շահի սրահը, ուր թագաւորը իր մինհստրների հետ նստած խորհրդի սրահում՝ սպասում էր:

Պահ մի աղմուկը, հրացանաձգութիւնը ցնցել էր նոցա, ամենքը վախեցած ու շիսթուած շարժուել էին գուրս վազելու, բայց շուտով լայտնուեց Նախը-Սալթանէն և հանդարտեցրեց՝ տեղեկացնելով Շահին եղածները, հաղորդելով որ խուժանը արդէն ցըսւած է և Արքի (պալատի թաղի) դարբասները փակուած ու պաշտպանուած նրանց առաջ,

Շահը գէմքը կնճռեց, պահ մի լոեց, լետոյ խիստ ձայնով ասաց,

— Եւ ով էր այդ սէլիդը որ գրգռում էր ժողովրդին:

— Ցայտնի չեղաւ, Զերդ Մեծութիւն...

— Լաւ, ներս բէլէք ապստամբին:

Ներս բերին Ալէմզիրին, որի ոտները շղթաներից ազատել էին, բայց ձեռքերը դեռ ետևից կապուած էր և չուանի ծալը բռնել էր Սաադը-Դօվլէն— այն պաշտօնեան, որ ուղարկուած էր ապստամբի դէմ զօրքով:

— Աքքէրիմ... ասաց շահը խորը գլուխ տուող պաշտօնեալին — բարաքեալահ... Ալժմ քանդիր դորա

ՃԵՌՔԵՐԸ և գնա ինքդ հանգստացիր...

Յետոյ եղը քանդել էին և Սէլիդ Ալէմգիրը անշարժ մնում էր դռան մօտ, Շահը ակնոցները դրեց աչքին և պահ մի սկսեց խոր զննել նրան ոտից մինչև գլուխ:

Սէլիդը մնում էր լուռ, անշարժ և քիչ գլուխը խոնարհեցրած:

— Աջալի՛ք... (զարմանք) խօսեց վերջապէս Շահը — սա է այդ նշանաւոր՝ Ալէմգիր կոչուողը... սա խօմի ջահել լակոտ է...

Յետոյ դարձաւ նրան և ասաց խստութեամբ.

— Դո՞ւ ես, որին Ալէմգիր անունն են տուել... Խօսիր... Դո՞ւ ես Սէլիմգիրը, որ յանդգնեցար իմ գէմ ելնել... Պատասխան տուր:

Ալէմգիրը մի վալրկեան նալեց Շահին ուղղակի և ասաց.

— Իսձ այդպէս են կոչում... Իսկ ես՝ ոչ:

— Իսկ դու ոչ: Իսկ ի՞նչ ես կոչում դու քեզ, ապրստամբ, թէ մարգարէից ուղարկուած:

— Ես ինձ կոչում եմ Սէլիդ Միրզա Ռիզա, մարգարէի սերունդից...

— Հըմ... իսկ ովկ է ուրեմն այդ Ալէմգիր ասածը...

Սէլիդը դարձեալ լուռ մնաց մի ըոպէ և գլուխը կրծքի վրայ խոնարհած, լետոյ նալեց ինքնակալին ու խորունկ շեշտով խօսեց.

— Թող Աշխարհիս աղօթարանը<sup>1)</sup> թոյլ տալ ինձ մի քանի յաւ խօսքեր ասելու նրան: Խօսքեր, որոնք ոչ թէ իմ — Սէլիդ Միրզա Ռիզալի կողմից են, այլ իսկական ալէմգիրի; բուն ալէմգիրի կողմից...

— Աջալի՛ք... դարձաւ Շահը Սադրազամին — ուրեմն ալս մարդը ինքն-իրեն ալէմգիր չէ ուզում կոչել... տեսնում էք, բաւական համեստն է եղել հարամզադան...

Ու ծիծաղեց: Պալատականներն էլ ծիծաղեցին:

— Ո՛չ, Զերդ Մեծութիւն, խօսեց Սէլիդը — ես ինձ այդպէս ո՛չ անուանել եմ և ո՛չ կանուանեմ... Ալդ

<sup>1)</sup> Շահին տրուող սովորական ախտղոսը.

մեծ անունը իրաւամբ միմիալն մէկին է պատկանում աշխարհում և այդ «միմիայն մէկը» —ժողովուրդն է...

Նահը, որ ժպիտը դէմքին սպասում էր շողոքորթութիւն լսելու իր հասցեին և արդէն մտքում ողորմելի էր գտնում ապօտամբին, ապշեց լսելով այդ խօսքերը: Նարժուեց աթոռի վրայ և մի «հըմ» արձակեց: Ենտոյ նորից ակնոցը ցցեց քթին և աւելի ուշադրութեամբ սկսեց զննել խօսողին:

—Ալո՛, շարօւնակեց սէլիդը—աշխարհում միմիալն մի հատ ալէմզիր (աշխարհակալ) կայ, ամէն տեղ, հիւսիսից հարաւ, արևմուտքից արևելք միմիալն նաև է որ իսկական աշխարհակալն է... ժողովուրդն է այդ և ահա այդ նո՞յն ալէմզիրն է որ խօսեց իմ բերանով՝ մեր իրաւունքները բռնաբարող, մեր կրօնը պղծող և մեղ օտարին ծախողների դէմ...

Նահը իջեցրեց ակնոցը և լուզուած ոտքի ելաւ Ենտոյ մի քանի քալ առաջ գնաց ու ասուց.

—Մարդ, դու բարի չես արդեօք:

—Ոչ երբէք, Չերդ Մեծութիւն... ես՝ մարդ եմ և այս ըոպէիս Ալէմզիրի, իսկական Ալէմզիրի բերանը... Նատ եղաւ մեղ այս բոլորը, թագաւոր, շատ եղաւ, խնալիր քո ժողովրդին, խնալիր երկիրը և խնալիր մեր սուրբ կրօնը... ժողովուրդը, ճշմարիտ է ուղտ է համբերատար, բայց երբ չափազանց են տանջում նրան—առիւծի է փոխւում... Քո պաշտօնեաները, ո՛վ Աշխարհիս ազօֆտարանը, քո մեծամեծները խարում են քեզ և ոսկիների փոխարէն օտարին ծախում մեր երկիրըն ու կրօնը, մեր իրաւունքներն ու արտօնութիւնը... Գալիս է այն օրը, երբ պարսիկը իր հողի մէջ օտար, ստրուկ և Փակիր կը համարուի... Ա՛յս ըոպէիս իսկ, թագաւոր, նա մոնչում է սաստիկ ցաւերից. տառապում է, ուտելու հաց չունի... պաշտօնեաներդ եղիդների նման կեղեքում են նրան անհաշեւ ու անգիտօրէն. խլեցին մեր ամէն ինչը... Ո՛չ տուն մնաց, ո՛չ իրաւունք և ո՛չ շարժուելու տեղ... Ալժմ դուրանն են ծախում ինգիպին՝ նրանց ոսկին առնելով... Զգուշացիր, թագաւոր, Ալէմզիրը զարթնել է, քիչ լետոյ կը մռնչալ կատաղութիւնից, ճանկերը կը պարզի և ալլ

ևս ո՞չ ոք նրան գէմ դնել չէ կարող...

— Բայց... բայց... ասաց Շահը ևս քանզիս լուս զուած - այս սէլիդը լիմար չէ եղել և հիտնալի էլ պարսկերէն է խօսում...

Ցետոյ դարձաւ մինիստրներին և ասաց քմծի-ձաղով.

— Տեսնում էք ինչպէս գիտէ ձեր կերած կաշառք-ների մասին, ձեր կեղեքումները, ագահութիւնը... Բարա-քեալահ Սէլիդ... գէ՛հ, տեսնենք, էլ ուրիշ ինչ գի-տես... գուցէ և այն գիտես որ եթէ ինզիզներից ետ վերցնեմ տուածս արտօնութիւնը, պիտի միլիօններով տուգանք վճարեմ... ինզիզը, խօ գիտես, կատակ չէ սիրում անել... հը՛, գիտես ալդ...

— Զերդ մեծութիւնը ծիծաղել է սկսում ինձ վը-րայ... թող լինի. ես և ամբողջ ժողովուրդը գիտենք ալդ... բայց ժողովուրդը համաձայն է վճարել ալդ միլիօնները, միայն թէ օտարների չը տրուի մեր իրաւունքները, չը սահմանափակուի մեր ազա-տութիւնը...

— Ալդակէս... իսկ դու ունիս ալդ միլիօնները:

— Ալէմգիրը ունի... ասաց հապարտութեամբ Սէլի-դը — նա կը տայ... ժողովիր նոցա մեծերին, կանչեր նոցա առաջնորդներին և պիտի համոզուես որ ժողո-վուրդը իր շորերն իսկ կը ծախէ, միայն կուզենալ իր իրաւունքները պահպանել և չը ծախել նրան օտարա-հաւատների...

Շահը մի վայրկեան լուս նալեց նրան, լետոյ դար-ձաւ Սադրազամին և ասաց.

— Յիմար չէ, ես ու իմ Աստուածը... իսելօք է ձեր ըոլորիցդ... խելօք է և լաւ խորհուրդներ է տա-լիս. Սադրազամ, աչքի առաջ ունեցիր...

Ապա մէկէն դարձաւ Սէլիդին և ասաց խստու-թեամբ.

— Իսկ դու չես այն, որ ասել է թէ պիտի կոր-ծանել իմ թագաւորութիւնը, դու չես նա, որ գալիս էր ինձ դէմ կուռելու։ Ասա, ուրանում ես ալդ։

— Ոչ, թագաւոր, ճիշտ է, ալդ ես էի... բայց քո նոյն իսկ մէկ պաշտօնեալի լանցանքի պատասխանա-

տւութիւնը ընկնում է քեզ վրայ, իսկ քո պաշտօնեաները...

— Լսում էք, մարդիկ, գոչեց Շահը պալատականներին, ապա գարձաւ Սէլիդին և ծիծաղելով աւելացրեց.

— Աֆֆէրիմ, երևի գիտես որ մեռնելու ես և դրա համար վճռել ես ալգաէս խօսել.

— Եթէ գիտենալի որ կապրեմ—դարձեալ այս նորնը և աւելի խիստ խօսքեր կասէի...

— Եւ պիտի ապրես... քալիեց գէպի նա Շահը—պիտի ապրես, սակայն մինչև այն օրը, երբ ապացուցանեմ քեզ թէ Ալէմգիրը կոչածդ ամբոխը մի նախիրէ, որին ուզածս ժամանակ և ուզածս տեղը կը քշեմ, կը ջարդեմ, կը ոչնչացնեմ... և այն օրը, երբ Ալեմգիր ասածդ ոչխար դառնալ ոտներս լզելու չափ, այն օր ես նրան կը բերեմ քո կախաղանի տակ՝ քեզ վրայ ծիծաղել տալու համար... և այժմ, գնա... Տարէք դրանքանտ.

— Զգուշացիր, թագաւոր, խօսեց սէլիդը, երբ սպասաւորներից մէկը նրան էր մօտենում՝ դուրս տանելու—Ալէմգիրը զօրեղ է և... անյաղթելի...

— Կը տեսնենք, կը տեսնենք... Ցարէք և լաւ պահպանեցէք դրան... ուրիշ ասելիք ունիս...

— Ոչ. միայն այն, որ Ալէմգիրը պիտի մանչալի... և վայ ձեզ այն օրը. կամ կը փշրուէք և կամ նա իր պահանջածը կստանալի...

— Ալդ մասին կը խօսենք քեզ հետ կախաղան գնալուց մի ժամ առաջ...

Ասաց Շահը, ձեռքով նշան արաւդուրս տանելու, լետոյ մէջքը դարձրեց և մտաւ իր առանձնասենեակը:

Ալէմգիր կոչուող սէլիդին տարանց Շահը ներս մտնելիս նշան արաւ Սաղրազամին իր հետ գնալու և որովհետև բարձրածայն էր խօսում, սրահի մէջ եղածները պարզ կերպով լսեցին սոյն խօսքերը.

— Եւ ո՞չ մէկը, Սաղրազամ, ո՞չ մէկդ ալդ սէլիդի չափ խելք չունիք... իրաւունք ունէր նա. պիտի գալ մի օր, երբ Ալէմգիր—ժողովուրդը ձեր ագահաբար կերպածները բոլոր ձեր քթիցը կը հանի... հեռացէք բոլորդ...

Այդ ժամանակ էր ահա, որ Սադրազամը ցած ձայնով մի բան ասաց նրան, որից լետոյ պալատականները սոսկումով ոստնեցին՝ լսելով Շահի զայրավիր աղաղակը:

— Ինչպէս... գոռում էր ինքնակալը կատաղի—արդէն .. և ժողովուրդը լսում է, կատարում է...»

Պալատականները վախեցած միմեանց երեսի նայեցին: Հասկացել էին: Սադրազամը Շահին հաղորդել էր մօշտէլիդի արգելքը ծիսելու մասին և ժողովրդական ցոլցերը, պատմել էր նաև Աշտիանցու—Թէհրանի մեծ մօշտէլիդի համակամութիւնը այդ խնդրում:

Պահ մի խոր լուստիւն տիրեց. ամէնքի աչքը սեեռուած էին Շահի առանձնասենեակի բաց դռանը:

— Կանչել իսկոյն Հաջի-Մուհամէդ Հասան թաջիր-բաշուն, <sup>1)</sup> պատժել նրան, որ թոյլ է տուել խանութները փակել... Աքսորել նրան...

Պալատականների գողը բռնեց. ինքնակալը սաստիկ զայրացած էր երեսում:

— Թո՛ղ... լսուեց քիչ լետոյ նորից նրա ձայնը—թո՛ղ այդպէս լինի... Ոչ մի խօսք ալ ևս... Կանչել տուր Նալիբը-Մալթանէին... աքսորել թաջիրբաշուն...

Եետոյ, երբ դարձեալ լուստիւնը տիրեց, սենեակից գլխիկոր գուրս եկաւ Սադրազամը և գունատ՝ ձեռքով արեց ամէնքին իսկոյն հեռանալու:

Բոլորը ոտերի ծալրերի վրա շտապեցին գուրս ելնել սրահից:

Փոթորիկը սկսում էր. ամէնքը տխուր, մտախոհ և լուսաբեկ էին, զգալով որ մօտեցել են ծանր օրերը:

## X

Սկսել էր մանր ձիւնել և ցրտերը վրայ էին հասնում. բայց ալնպիսի ցրտեր, որոնք միայն մի կամ երկու օր էին անում, այն էլ ոչ աւելի քան զէրօից միքանի աստիճան ցած: Տաք չէր—ահա բռլորը, ալ և

<sup>1)</sup> Վաճառականապետ, որ պետութեան կողմից ճանաչուած է իրը դատաւոր վաճառականների և նրանց արածներին պատասխանատու:

ցեխ էր, անտանելի ցեխ՝ մանաւանդ լսվրծուն դարձած շուկաներում և աղտօս փողոցներում:

Պալատի շուրջը միայն քիչ մաքուր էր, այն էլ, որսվհետև քարած չէր մեծ մասամբ, հալած ձիւնից ցեխանում էր և եղած աղբի ու տերեւների մնացորդների հետ զգուելի կոյտեր գոյացնում պատերի տակ:

Զը նալելով դրան, Դեկտեմբերի այդ ցուրտ օրը մալրաքաղաքի զանազան կողմերից հասնելով՝ պալատի առաջ ջորիներից ցած էին իջնում զանազան կրօնաւորներ՝ շրջապատուած հետիոտն խումբ-խումբ ծառաներով. ։ Ետոյ քղանցքները ժողովում և ներս էին մտնում:

Շահը քաղաքումը չէր և Սագրազամը ազգային ժողով էր գումարում, ուր հրաւիրուած էին բարձր ազնուականութիւնից, բարձր հոգեսորականութիւնից և միջին դասակարգից մի քանի լայտնի հարուստ ու ազգեցիկ մարդիկ:

Սկզբից նա լայտարարել էր որ ժողովը կալանում է՝ որոշելու համար թէ որտեղից և ինչպէս պէտք էր վճարել անգլիական մենափաճառի ընկերութեան տուգանքը, քանի որ ըստ հրամանի Շահի, մենափաճառը զնշում էր:

Այդ բոլորը կատարւում էր մի շարք կարեսոր դէպքերի իրը արդիւնք: Ժողովուրդը լուզում էր և ցոլցերի էր արգէն սկսել. կրօնաւորութիւնը արձակ-համարձակ գրգուում էր ժողովրդին՝ ոտքի ելնելու:

Օգտուելով մենափաճառի դէպքից, Պարսկաստանի ալդ եթէ ոչ առաջին-գոնէ երկրորդ Շահը—կրօնաւորութիւնը սեղմել էր իր շարքերը, կազմակերպուելով գաղտնի ընկերութեան զօրեղութեամբ ցանցերը մեծացրել, գործակալներն ու գրդիչները բազմացրել և մտադիր էր մի կտրական հարուած տալ Շահի տիրապետութեան և մի անգամ ընդ միշտ զգացնել իր զօրութիւնը:

Մէլիդ Մէլիդ Ռիզա Ալէմզիրը ձեռնարկել էր լայտնի ապստամբութեան՝ նրա քաջալերութեամբ, և, չափազանց ոգեսորութեամբն ու արագ, առանց լայն պատրաստութեան գործի սկսելը՝ ոչնչացրել էր նրա շարժումը: Մէլիդ Հաբիթուլլահը Քէլբէլալի մեծ մօշտէլոդի

նայիքներից (գործակալ) էր և Թէհրանի բարձր կրօնաւորութեան լանձնարարութեամբ էր ոտքի հանել խէսփուշներին...

Կրօնաւորութիւնը ժողովրդի օգտի դիմակի տակ, լանուն նրա, յենուած ոսւսաց դեսպանատան քաջալերութեան վրալ ևս, ալժմ ալն աստիճան լանդդնօրէն հրապարակներում, մզկիթներում և շուկալում ապըստամբութիւններ էր կազմակերպում, որ Սադրազամը ըմբռնեց կացութեան ծանրութիւնը:

Զինու ոյժով անհնար էր դէմ դնել. զօրքն անգամ ընդունակ էր դառնալու մեծ մօշտէլիդի կողմը, քանի որ, ինչպէս նկատուեց, զօրապետից սկսած մինչև լետին զինուորը ամենայն հպատակութեամբ լսում և կատարում էին մօշտէլիդների հրամանը, փշել էին երենց ծխափողները, զալունները և համարձակութիւնը արև աստիճանի էին հասցրել, որ չէին քաշւում փողոցներում, բազմութեան մէջ՝ հայհոյել մինիստրներին, թագաւորին...

Այս բոլորը շատ լուրջ հետեանքների կարող էին հասցնել: Հնար չկար ուրեմն որև է միջացաւ չէզօքացնել կրօնաւորութեան ազդեցութիւնը: Մնում էր մի կերպ զիջանել գոնէ, նախ լուզումները դադարեցնել, սպառնացող ընդհանուր ապստամբութեան դէմն առնել:

Եւ Շահը հեռացել էր քաղաքից ու չը նայելով ուսւաց դեսպանատան նամակին վերադառնալու, օրովհետեւ ժողովուրդը մտածում էր քրիստոնեաների կոտորած լառաջացնել—նա ներս չեկաւ, լուր ուղարկեց դեսպանատան. որ հոգ չանեն և հրամայեց Սադրազամին շտապել ժողովը գումարելու:

Ուրբաթ օր էր ժողովի օրը նշանակուած, Դեկտ. 19-ին: Ժողովուրդը ներկայացնող ալդ խորհուրդը գումարելում էր Շահի դիւնխանէն, որ երէկւանից պարբառատաշ էր դըա համար: Սադրազամը առաւօտ շուտով պալատումն էր բոլոր միւս մինիստրների հետև ընդունում էր եկողներին:

Հետզհետէ սենեակ էին մանում սպիտակ փաթոթներով ախօնդներ, կապոյտ և կանաչ ապարօշներսվ լուսաց

սէլիդներ, խոնարհւում Սադրազամի և մինստրների առաջ, մի.քանի ըռպէ փոխադարձ հաճողախօսութիւններ անում և երբ սրահը լիքն էր, մեծ մինիստրը իր կողմէն կանգնած մի բարձր կրօնաւորի դարձաւ և ասաց.

— Ինչպէս էք կարծում, չը սկսեե՞նք:

— Ինչպէս Զերդ վսեմութիւնը կը ցանկալ. բաւական ժողովուել են:

— Այո, գրեթէ բոլորը կան:

Եւ դառնալով խումբ առ խումբ միմեանց հետ խօսողներին, ասաց բարձրածալին.

— Աղաներ, սկսենք... համեցէք տեղ բռնէք...

Ամբողջ տասնևհինգ ըռպէտ տեսեց մինչև միմեանց հրամցրին վեր ու վար, լետոյ տեղաւորուեցին այնպէս, որ Սադրազամի աջ կողքը բոնել էին երկու լայտնի ախօնդներ, ձախը մի նշանաւոր սէլիդ, լետոյ մինիստրները, ապա միւս կրօնաւորները և ամենից ցած՝ մայրաքաղաքի լայտնի հարուստ վաճառականներն ու սեղանաւորները:

Բոլորը նստել էին գետին, պատերի տակ փռուած թաւշեալ ներքնակների վրայ:

Երբ տեղաւորուեցին և մի քանի ըռպէ լռութիւն էր տիրել, մեծ վէզիրը շաբժուեց, գրպանից կլսր վաթաթած մի թուղթ հանեց, դարձաւ ժողովականներին և ասաց.

— Աղաներ, Աշխարհիս աղօթարան, Իրանի մեծ Շահընշահը — որի կեանքը Աստուած երկար պահպանէ...

— Ամին... ասացին ամենքը:

— ... Բարեհանեց լսել մեծ մօշտէլիդների և ժողովրդեան խնդիրը և վճռեց լուծել անգլիական ընկերութեան տուած ծխախոտի մենավաճառը... Թաւրիզում արդէն դա կատարուած է և եթէ ալդ ընկերութիւնը դեռ պահում է իր ծառայողները և առևտրականներից առած թամբաքուն — պատճառը, ինչպէս բոլորդ գիտէք, այս է, որ Աշխարհիս աղօթարանը ստորագրութիւն է տուել Անգլիային, եթէ ջնջի մենավաճառը, իբր վարձատրութիւն՝ պիտի հատուցանէ նրանց կրած վնասները... Եւ իրաւ, դուք էլ լաւ տեսնում էք որ ինգլիզները ամբողջ Իրանում մեծ ծախսեր են արել

և չեն կարող թողնել այնպէս ու առանց մի օգուտի՝ հեռանալ։ Բացի դրանից, Իրանը չի կամենալ որ իր ինքնակալը տուած խոստումը չը կատարի, այլ և ինդվիզը երեխալ չէ, որ մենք ձեռքիցը ամեն բան խլենք, իրեն էլ գլխին խփենք ու երկրից դուրս ձգենք... Մի խօսքով, հարկաւոր է այդ մարդկանց վնասները տալ և ճանապարհ ձգել... Այնպէս չէ, աղա... դարձաւ նա կողքի բարձր կրօնաւորին։

—Ի հարկէ. շտապեց ասել մոլլան—այդ ալդպէս է։ ինչքան որ անհաւատ է ինգլիզը, բայց երբ մենք վնաս ենք տուել նրանց, պիտի վճարենք...»

—Այսինքն, աւելացրեց միւս կողքի սէլիդը—նախ ալիտի ետ-տանք ի հարկէ առածներո, լետոյ վնասներն էլ վճարենք...»

—Իսկ ինչ է նրանց պահանջը. խօսեց ցածի կողմից մի սեղանաւոր—եթէ մի քանի հազար թումանի...»

—Ոչ, ժպտեց Սադրազամը—այստեղ մի քանի հազարը ոչինչ չի անիլ... միլիոններ են պէտք։

—Անշուշտ, խօսեց մեծ մոլլան—Աշխարհիս աղօթարանը իր գանձարանում լի փող ունի— որին Աստուած միշտ լի պահի—և կը վճարի ու Իրանը կազատի անհաւատների պղծումներից...»

—Մի քանի միլիոնը ինչ բան է ձահնշահի միշտներով լի գանձարանի առաջ. խօսեց մի ուրիշ մոլլա—վճարենք և պլծաւ գնաց։

—Շահի գանձարանը, ասաց Սադրազամը—այնքան հարուստ չէ որ կարօղանալ մի անգամով 12 միլիոն թուման տուգանք վճարել...»

—Ինչի՞ս... կանչեց ներքեմից մի վաճառական 12 միլիոն. Դա խօ ամբողջ Իրանն արժէ...»

—Ասսա աստաֆրուլլահ<sup>1)</sup> Հաջի Միրզա Լիւթֆի, ձայնեց մի սէլիդ. Իրանը միթէ ալդքան քիչ ես գնահատում...»

—Տասներկու միլիոն!... ձայնեցին ամեն կողմից: Յետոյ գլուխներ սկսեցին դէպի միմեանց կռանալ, փափսոց լսուեց ալսալն կողմից և վերջապէս մոլլանե-

<sup>1)</sup> Քաւ լիցի:

ըից մէկը քիչ բարձր ձայնով ասաց.

— Միթէ անգլիացիք արգէն իրենց պահանջը աղել են թղթով։

— Թղթով ոչ, սակալն ինձ տեղեկացրել են և Աշխարհի աղօթարանը գիտէ որ պահանջուած գումարը դորանից պակաս չէ լինելու։

Այստեղ սկսեց մի վիճաբանութիւն, որ հետզետեւ տաքացաւ և ընդհանուր դարձաւ։ Վիճում էին թէ անգլիական ընկերութիւնը իսկապէս ալդքան պիտի վնասէր և թէ ինչ ունի նա արած, որ պահանջում է ալդպիսի խոշոր գումար։ Եղան առարկութիւններ, տաքացան, հալհուցին անգլիացիներին և հուսկ ուրեմն հասան այն հարցին, թէ որտեղից և ինչ միջոցներով կարելի էր ձեռք բերել պահանջուած գումարը։

Այն ժամանակ մինհստրներից մէկը որ անշուշտ սկզբից ունէր Սադրազամի խօսքը, զգուշութեամբ մէջ ձգեց մի նոր հարկ սահմանելու և կամ անգլիացիներին երկրի մէջ մի ուրիշ արտօնութիւն տալու խնդիրը։

Այս վերջին կէտը հանդիպեց զօրեղ գիմադրութեան, մանաւանդ երբ Քէլբէլալի մօշտէլիդի փոխանորդներից մէկը խստութեամբ գոչեց։

— Մեծ մօշտէհիդը պահանջ է դնում ոչ միայն խլել օտարների ձեռքից թամբաքուի մենավաճառը, այլ և բոլոր այն արտօնութիւնները, որոնք տրուել են անհաւատներին... Իրանի մէջ միմիալն Իրանցին իրաւունք ունի երկիրը շահագործելու և ուրիշ ոչ ոք։

Պահ մի ամենքը լրեցին՝ լսելով ամէնքից և մանաւանդ ժողովրդից պաշտուած մօշտէհիդի հրամանը։

— Նոյնը և ես կասեմ. ասաց Թէհրանի մօշտէհիդ Միրզա Հօսէլին Աշխանու գործակալը։

Աշխանին ինքը չէր կարողացել կալ, որովհետև շատ ծեր էր։

Խնդիրը կենդրոնացաւ ուրեմն միմիալն եկամուտի նոր աղբիւրներ գոլացնելու վրայ։

Եւ այստեղ էր ահա, որ յանկարծ մի երկարահասակ սէլիդ, բարձրացրեց գլուխը և ձայնեց։

— Թող շնորհ անի ինձ մեծ Սադրազամ Էմին-Սօլթանը և պատկառելի ժողովը՝ լսելու։

Իսկոյն ամէն շշուկ դադարեց և ամէնքը սէլիդի կողմը դարձան:

— Ո՞վ է դա, հարցրեց Սադրազամը կողքի կրօնաբորին—ես դրան չեմ կանչել և չեմ էլ ճանաչում:

Կրօնաւորը ժպտալով խոնարհուեց ու ասաց.

— Ալդ սէլիդը ինձ—ծառալիդ հետ է եկել... Քէլքէլալի մեծ մօշտէհիդից յատկապէո եկած գործակալնէ... Սէլիդ աղա Հաբիբուլլահ...

Սադրազամը գունատուեց և շրթունքը կծեց: Ահա թէ ինչ. մեծ մօշտէհիդի կողմից յատուկ գործակալներ են մտնում մալրաքաղաք և իրեն ալդ յալտնի չէ: Ցետոյ, գէմքը կնճռեց և խստութեամբ նայեց մինիստրներից մէկին:

Բայց սէլիդը ելել էր աեղիցը, ցցել երկար հասակը, ձեռքը պարզել և խօսում էր այսպէս.

— Միակ մի հատ հնարք կալ! Մենք ոյժ չունինք անհաւատներին վոնդելու մեր երկրից, ոչինչ չը տալու նրանց... ինգլիզներներն էլ շատ լաւ գիտեն մեր թուլլիները և եթէ նոյն իսկ վնաս էլ կրած չը լինեն, կառնեն մեզնից ալդ միլիոնները... Պիտի տալ—ահա միջոցը. և պիտի տան ալդ գումարը՝ նախ Շահնշահի գանձարանը և երկրորդ այն մարդիկ, որոնք մեր արտօնութիւնները ինգլիզներին տալու համար մեծ փողեր են վերցրել...

Ալս խօսքերը շանթի նման ընկան ժողովականների վրայ: Մինիստրները շարժուեցին, Սադրազամը ուղեց ոտքի ենել, բայց սէլիդը դարձաւ գէպի նա և գոչեց.

— Ես չեմ զբարտում. սկսած ձեզնից, Էմինը Սուլթան, մինչև վերջին մինիստրը հարիւր հազարներով կաշառքներ էք ստացել ինգլիզներից... Նախ վերադարձէք ալդ գումարը, իսկ մնացածը ժողովուրդը պատրաստ է տալ...

Սադրազամը զալրացած ոտքի ելաւ, նոյնպէս և մինիստրները, լետոյ բոլոր ժողովականներն էլ և խառնուեցին իրար: Մեծ մինիստրը մի ակնարկ նետելով եղածի վրայ, զգաց որ ամէն ինչ կորսուած էր և շտապեց կողքի դռնով դուրս նետուել: Նրան հետևեցին

մինիստրները, որոնցից յետով սրահի մէջ բարձրացաւ մի աղմուկ. սէլիդ Հարիբուլլահի ձալնը երբեմն գերիշ-խում էր, երբեմն մի ուրիշ մոլալի զայրացկոտ խօսքերն էին լսում և հուսկ ուրեմն, խառն ի խուռն, ժողովականները մինիստրներն հետ վիճելով սկսեցին դուրս գնալ, նստել ջորիները և շտապով հեռանալ պալատից։

Մինչ այդ, Սադրազամը շտապով մտել էր խորհըրդարանին կից օենեակը, սպասել որ մինիստրներն էլ գալին, յետով փակում էր դուռը և գունատ՝ տառմ նրանց։

— Ամեն ինչ վերջացաւ, աղաներ... պէտք է հեռագրել Շահին քաղաք մտնելու...»

Այդ միջոցին լսուեց մի աղմուկ դրսից, յետով դէպի բազը տանող դուռը ուժգնութեամբ բացուեց և մի սպասաւոր ներս մտաւ շտապով ու Սադրազամին տուաւ մի հեռագիր ու ասաց։

— Կազուինից է. հրամալել են ասել որ շատ կարեւոր է։

Սադրազամը դողդոջիւն ձեռքով պատռեց ծրարը և երբ կարդացել էր, ամէնքը նկատեցին թէ նա ինչ-պէս աւելի գունատուեց և սկսեց դողալ։

— Աղաներ, խօսեց նա մի վարկեան լուռթիւնից յետոյ, դառնալով մինիստրներին — Ղազուինում խոռվութիւն է... Քաղաքապետը փախել է և թէհրան է գալիս...»

Եետոյ ծալեց թուղթը, գրպանը դրաւ, խոնարհուեց ու աւելացրեց։

— Ես գնում եմ Շահի մօտ... Իմաց տուէք այս բոլորը Նալիբը-Սալթանէին...»

Ու թողնելով միւսներին խորին անձկութեան և սարսափի մէջ, դուրս նետուեց սենեակից...»

Ցիրաւի Ղազուինում սկսել էր ժողովրդի գործնական ցոլցը, որ նմանում էր ուղղակի ապստամբութեան։

Մի մոլլա էր եղել սկզբնապատճառը։ Բազարում տեսնելով որ մէկը ծխում էր դէպուն, զայրացած խփել ու ջարդել էր ծխելիքը և ծեծել ծխողին։ Սա գնացել էր քաղաքապետին գանգատ։ Քաղաքապետը ուղարկել էր Փէրլաշներ՝ բոնելու մոլալին, բայց մոլլան գրգռել

էր ժողովրդեան և այնպէս լաւ, որ ահագին ամբոխը վրալ էր տուել քաղաքապետի պալատի վրալ և սպառնացել սպանելու նրան:

Եւ ալդպէս էր ահա, որ քաղաքապետը ստիպուել էր փախչել քաղաքից, այն էլ շնորհիւ Շահից այնտեղ աքսորուած Թէհրանի թաշիրբաշի Հաջի Մօհամէդի: Ամբոխը թողել էր անցնելու իր օգտի համար աշխատող Հաջի Մօհամէդին կառքով, իսկ նրա կողքին գունատ և մեռեալի պէս նստած քաղաքապետին, լաւ չը նկատելով ծածկուած կառքի խորքում, կարծել էր Հաջիի ընկերներից մէկը...

## XI

Թէև սովորաբար մութ և ամայի են լինում Թէհրանի շուկաները գիշերով և նրա երկար անցքերի բնակիչներն են կազմում նախ՝ շների վոհմակները, լետոյ ալսայն կողմ հսկող դարուղաներն (բազարի պահապաններ) և վերջապէս ստուերների պէս պատերի տակով սահողանցնող խէսփուշները—սակալն ալդ գիշեր բոլորովին ուրիշ կերպարանք ունէր նա, մանաւանդ պալատին մօտ գտնուող շարքերում:

Ընդարձակ կամարների տակ սոսկալի աղմուկով հնչում էին շների ձայները, որովհետև շարժուն ստուերների խմբեր, լուսաւորուած մի մի աղօտ լուս սփռող լապտերով արագութեամբ երթևեկում էին մթին խորշերում, լսում էին մարդկային աղմուկ, միմեանց հեռուից ձայնելու կոչեր և որը աւելի անսովորն էր—մէկէն հնչում էին ոտնաձայներ որևէ է մութ կողմից և խաւարից բարձրանում էին օռնոցներ, բացականչութիւններ ու խառնիխուռն, անորոշ, բայց սպառնագին աղաղակներ:

Յետոյ, ալդ բոլորը ալիքի նման հոսում էր դէպի մի խորութիւն, անցնում դէպի մի ալլ շարք և գնում աւելի հեռուները:

Պահնորդ ալլ ևս չէր երևում. ալլ ևս չէին լըսում նրանց զգուշացնող կանչերը. միայն շներն էին վրդովուած. հարիւրաւոր շներ, որոնք միահամուռ հա-

ջոցներով, արձագանք տուող կամարների տակ, խառնելով իրենց ձայնը մարդկային աղմուկներին՝ դժոխալին կերպարանք էին տալիս շուկաներին:

Աղմուկը աւելի շատ էր Սէբզէ-Մէլդանից ուղիղ դէալի ներքեւ պարզուող երկար ու լայն շուկայի մէջ։ Շուկայի բերնից սկսած, լոնկարծ հրապարակ էին ոստնել մթութիւնից հարիւրաւոր ալյանդակ դէմքեր, որոնց առջևից քայլում էր մի մոլլա, — կարպետի մէջ փաթաթուած ու վիզը նրա մէջ թաղտծ սևագէմ անձ և մի ինչ որ հսկայ կիսամերկ, որ ձեռքի փալտն էր ճոճում օդի մէջ և խանութների տախտակեայ փեղկերին ահաւոր հարուածներ իջեցնում աջ ու ահեակ։

Խակ մոլլան զիլ ձայնով գոռում էր անընդհատ, այնպիսի զիլ, սուր ձայնով, որ շներն անգամ սարսափով կծկում էին պտտերի տակ։

Որոշել որեւ է նախադասութիւն ալդ ժխորից, ալդ խաօսալին աղմուկներից՝ շատ դժուար էր հեռուից։ Ամէն ինչ խառնում էր իրար և մանաւանդ արձագանքի թնդիւնը կամարների տակ, ձայնային մշուշի նման ամէն ինչ խեղտում էր իր ծալքերի, ցնցումների մէջ և խառնուփնմթոր տանում հեռուները։

Բայց Մոլլա նէջէֆ Կուլին գիտէր թէ որոնց էր առաջնորդում։ Եթէ աղմկում էր, խօսքերի հեղեղ էր գուրս վիժում կոկորդից, ալդ՝ ոչ թէ հասկանալի մի բան ասելու համար էր, ալլ միմիալն քաջալերելու, ոգեսրելու իր աղաղակներով։

Ու լաջողուում էր, ոչինչ խաղաղ չէր մնում շուկայի մէջ. խլրտում, վազք, գոների վրայ փալտի ուժգին հարուածներ...

— Ե՛լ, փողոցալիններ, Ել խէսփուշներ, լութիններ, Ել մոխրատան ցնցոտիններ, Ե՛լ ճշմարիտ միւսիլմաններ. զարկէք, փշբէք, գոռացէք... ալսօր կորիւ կալ, կոտորած կալ, ալսօր փառքի օրն է, լանուն մեծ մօշտէլիդի...

Ահա նրա բոլոր խօսքերը, որոնք կրկնում էին, եռապատկում և որոնցից իւրաքանչիւրը արտասանում էր նա աւելի և աւելի բարձր, զիլ, ականջ խըլացնող ձայնով..

Երբ այդպէս հարիւրաւոր ամբոխը մոլլալի կատա-  
ղի ազագակներով հասել էր շուկալի մէջ տեղը, ձէթէ  
ճրագի աղօտ լուսի մէջ երևաց, որ բոլորը գրէթէ զին-  
ուած էին ոչ միայն երկար ցուպերով, ալլ և սրերով  
և մինչև իսկ հրազանի սւիններով, որոնց ով գի-  
տէ որտեղից էին ձեռք բերել և ցցել երկար փայտերի  
ծալլերին ու նրանցով աջ ու ահեակ ծակոտում էին ինչ  
որ պատահում էր—պատ, խանութի դուռ, հաջող շբ-  
ների. կործանում էին ձէթի ճրագները, քարու քանդ  
անում տեղտեղ վերևից կախուած լավտերները...

—Ցառաջ, ցնցոտիններ, գոռացէք, աղմկեցէք, է՛լ,  
խէսփուշնէր, հոգիններդ կը հանեմ եթէ որևէ պատ  
կանգուն թողնէք այն անիծեալ շէնքից... գէ՛հ, գոռա-  
ցէք «սալաւաթ»...

—Սալաւաթ... օռնում էր ամբոխը...

Տուկայի շարքերի հանգույցում նրանց միացաւ մի  
ուրիշ խումբ ևս նոյն տեսակ աղմուկներով, սակայն  
աւելի կանոնաւոր և աւելի լաւ զինուած։ Նրանց ա-  
ռաջնորդում էր մի սէլիդ, որ ձեռքում ճոճում էր  
կեռ ու երկար սուր և թնդացող ձայնով կանչում.

—Քալեցէ՛ք, հաւասացեալններ, այսօր կրօնի լաղ-  
թանակի օրն է...

Երբ խմբերի գլխաւորները մօտեցան միմեանց,  
Սէլիդը բռնեց մոլլալի թևը և շտապով հարցըց.

—Նատ էք։

—Զորսից հինգ հարիւր։

—Լաւ զի՞ւուած։

—Փայտ, սուր, սուին, ատրճանակ...

—Իսկ բահ, կացին։

—Նրանք ետեից են գալիս... մօտ 50 հոգի...

—Լաւ... գոռացէ՛ք, թող աւելի շատանան...

—Իսկոյն կը լարձակուենք...

—Իսկոյն. • քանի դեռ շէնքը չեն պաշարել զին-  
ուորներով...

—Սալաւաթ գոռացէ՛ք, է՛լ ցնցոտիններ... դարձու  
մոլլան իր ետեից եկող ամբոխին—ծեծեցէք պատ, դուռ,  
շներին զարկէ՛ք, աղմկեցէք...

— Յառաջ, դարձաւ Սէլիդը իր ետևից եկողներին — քար ու քանդ անենք բռնաւորների անիրաւութիւնները:

Ու քալլեցին գժոխալին խառնուրդով, անասելի աղմուկներով:

Այս բոլորը այնքան յանկարծակի էր կազմուել և այնքան ահաւոր էր, որ ոչ մի դարուղա չը համար. ձակուց շարժուել տեղից: Սէրգէ-մէլդանից դուրս գըտնուող գիշերալին պահակները զգացին որ շուկայում ինչ որ բան է կատարում, իսկոյն իմաց տուին պալատի շրջապատից ներս եղած զօրախմբին, լետոյ հնչեց մի շեփոր Արքի միջից և հուսկ ուղեմն պալատի թաղի գանազան կողմերում կերկերացին ուրիշ շեփորներ ևս...

Մինչ Արքը <sup>1)</sup> զարթնում էր, սպաները քնաթաթախ իրար անցած՝ չը գիտէին եղածը, մինչ բուն պալատի միջից հարց էին տալիս եղածի մասին և շտապով զարթեցնում էին քաղաքապետ—զօրաց հրամանատար արքայորդում... շուկայի միջի զինուած խուժանը, որ Սէրգէ-մէլդանի դռան փակուած լինելուն համար նետուել էր Զաբախտանալի փողոցի կողմը—դէպի բանտերը, արդէն կուտակում էր նրա պատի տակ և կացինների հարուածների ձախը հասնում էր մինչև Շահի հարեմիանան...

Յարձակումը բանտի վրայ էր: Երկար չը տեսեց. տասնեւհինգ րոպէի մէջ ջարդել էին դռները, ներս խուժել, պահապաններին ծեծել, փախցրել և չէր անցել այլ ևս տաս րոպէ, որ խուլ աղմուկներից լետոյ յանկարծ մթան միջից փողոց դուրս բերելն ձեռքերի վրայ բարձրացրած մի սէլիդի և ահաւոր աղմուկը որոտաց.

— Սալաւաթ...

— Սալաւաթ... հնչեց ամէն կողմից:

Եետոյ ամբոխը սկսեց ջարդ ու փշուր անել ամէն բան, բայց մէկէն առաջնորդող սէլիդը գոռաց.

— Վերջացաւ... ով սիրում է Մարգարէին, թող

<sup>1)</sup> Ամբողջ պալատի թաղը, որ պարսպապատ է:

ետ քաշուի, Ալէմգիրը ազատուած է...

Ապա շտապով մօտ քաշեց մոլլալին, մի բան ա-  
սաց նրան և յանկարծ Նէջէֆ-Կուլին ցցուեց երկու-  
ռաքի վրայ ու ձայնեց.

— Խէսփուշներ, ինձ մօտ...

Ամեն կողմից սահելով կամ ոստնելով շրջան կազ-  
մեցին խէսփուշները, առին իրենց մէջ մոլլալին, սէլի-  
դին և ազատուած բանտարկեալին, ճղեցին ամբոխը և  
անհետացան մթին փողոցներում:

Եւ ժամանակն էլ էր. դիմացից լսւում էին արդէն  
ոտնաձայներ, բարձրանում էր մի մութ, պատի նման  
շարժուն գիծ և փողփողում էին հրացաններ:

Զինուորներ էին, որոնք մի սպալի հրամանի տակ  
սուկնները դէմ տուած՝ գալիս էին ամբոխի վրայ:

Ամբոխը, մնացած առանց առաջնորդնողների և աղ-  
մուկներով քաջալերողների, խառնիթուուն տեղի տուաւ,  
սպալի հրամանի վրայ ցըուեց կողմնակի նեղ փողոցնե-  
րում և քիչ լետոյ զինուորները հրացանները իջեցրած՝  
միմեանց երեսի էին նայում.

— Բայց ինչ եղաւ, գոռաց սպան—ինչու էին ե-  
կել և ինչու ալսպէս զուտ ցըուեցին:

— Բանտի վրայ էր. ասաց մի զինուոր:

Մօտ վազող բանտի պաշտօնեանները դողդոջիւն  
պատմեցին եղտծը:

Դռները ջարդել էին, փշրել Սէլիդ Միրզա Ռիզա,  
Ալէմգիր կոչուող բանտարկեալի շղթանները, յետոյ ոչ  
մի վնաս չը տալով, ոչ մի կաթիլ արիւն չը հոսեցնե-  
լով, ձեռքերի վրայ էին բարձրացրել ազատուածին և  
անհետացել:

— Ո՞վքեր էին, ինչ ամբոխ էր, ով էր առաջնոր-  
դողը...

— Խէսփուշներ էին...

Սպան դէմքը կնճռեց, հրամալեց զինուորներին  
ներս մտնել, իսկ ինքը պալատ գնաց՝ սպասող նալիքը-

Սալթանէին լուր տանելու:

Նահն էլ զարթնել էր և յուզուած ման էր գալիս սրահում, սպասելով լուրերի:

Նակերը-Սալթանէն գունատ առաջ եկաւ և պատմեց եղածը:

— Ալդպէս. առաց Նահը—ազատեցին նրան... ուրեմն նա իրաւունք ունէր...

Յետոյ մտախոհ՝ նստաւ, ձեռքով արաւ որդուն՝ հեռանալու և մամուաց.

— Իրաւունք ունէր հարամզադան... ես դեռ չեմ ճանաչում ժողովրդին... Ալէմգիրը շարժում է...

Այս դէպքերն էին տեղի ունենում ահա այն գիշերը, որի լուսանալուց յետոյ էր որ կատարուեց Պարսկական նորագոյն պատմութեան մէջ կարևոր և հետաքրքիր կէտ կազմող դէպքը—ժողովրդի ապստամբութիւնը իր ինքնակալի դէմ:

## XII.

Վաղ առաւօտից ամբոխը խռնուել-բռնել էր պալատի շուրջը: Արքի դռները կիսաբաց էին թնդանօթ-ների հրապարակի կողմից, իսկ զինուորները պատ էին կազմել ներսից: մինչև իսկ մի քանիսը բարձրացել էին դարբասի դլիփ բարձր աշտարակների վրայ և այստեղից դիտում էին ժողովրդի շարժումը:

Այդ միևնույն դրութեան մէջ էր նաև վարի կողմի — Մէլդանը—շահ կոչուող հրապարակի վրայ բացուող դուռը: Մէրգէ-Մէլդանի կողմից, շուկայից ելնելով խըռն-ւում էին փողոցի մէջ ամէն տեսակ մարդիկ և անցուդարձը լիովին կանգ էր առել:

Յուզուած մտքերը մի պատրիուակ էին որոնում և այդ պատրիուակը Նահը—ինքը տուաւ:

Անհամբեր, կատաղած գիշերալին անցքից և մանաւանդ սաստիկ զալրացած որ ժողովուրդը խլել էր Օլէմգիր-սէլիգին բանտից, Նահը մտսծել էր մի կտրական հարուածով ամէն ինչ վերջացնել և առաւօտ շուտով էր Միրզա Խսահ, Թէհրանի նոր փոխ քաղաքապետին՝

ուղարկել էր Թէհրանի մեծ մօշտէլիդի Աշտիանու մօտ։ Բացի գրանից նա գիշերով հրամայել էր զարթեցնել և պալատ կանչել Սագրազամին և բոլոր միւս նախարարներին, գոռացել էր, հայութել անխտիր տմենքին, խիստ նախատել իր որդի—Նախը-Սալթանէին, որ չէր կարողացել ապատամբ սէլիդին մի ապահով տեղ թագցնել, ոտները գետնին էր խփել և գոչել.

— Այսօր իսկ վերջ տալ բոլորին, ապա թէ ոչ՝ բոլորդ ձեր պաշտօններից կը զրկուեք...

Միջակա Խսսահը, սիրտը դող ելած Շահի իրեն լանձնած կարեոր պատգամաւորութիւնից, մենակ, առանց թիկնապահի անգամ գնացել էր Աշտիանու մօտ.

Հարիւրամեալ ծերունի մօշտէհիդը, չը նայելով նոր լոյսը բացուելուն՝ զարթուն էր։ Քաղցը ժպիտով ընդունեց Շտհի պատգամաւորին, հրամցրեց կողքին նստել, հրամայեց թէլ բերել և ասաց.

— Ներեցէք որ անկարող եմ դալլուն հրամցնել... Հարամ է ծխելը...

Փոխ-քաղաքապետը քիչ կարմրեց, մի քանի խօսք կակազեց, լետոյ գլուխը կախ, առանց ծերունու երեսին նայելու՝ ասաց.

— Ես ի հարկէ, իմ կողմից... ոչինչ, ոչինչ չունիմ ասելու. Հազրաթը Մէհամի ջաննիշին<sup>1)</sup> մեծ մօշտէլիդի հրամանը՝ հրաման է, Աստծոյ պատգամ... Բայց, գիտէք... Աշխարհիս աղօթարան Շահընշահը, — որի կեանքը Աստուած երկար անէ, որ ինքը, ինչպէս գիտէք, բարեպաշտ, մեր սուրբ կրօնի համար ջերմեռանդ...

— Ի հարկէ, գիտեմ, ժպտեց ծերունին միջահատելով — և ինձ շատ ցաւեցնում է նրա լամառութիւնը... Ինքն էլ, փառք Աստուծոյ, լաւ գիտէ որ շէրիաթին դէմ է, ուղղակի կրօնին դէմ օտարահաւատներին ծախել մեր իրաւունքները, միւսիլմանի սեփականութիւ-

<sup>1)</sup> Նշանաւոր մօշտէհիդները համարում են անհետացած իմամ Մէհամի հոգին կրողը։ Զաննիշին՝ նշանակում է հոգեկիր։

նը... Շատ, շատ եմ ցաւում... բայց ինչ արած, կրօնը աւելի մեծ է, Ղօրանը աւելի լարգել՝ քան ամէն թագաւոր...

— Բայց, առարկեց փոխ-քաղաքապետը — Աշխարհիս աղօթարանը ցանկանում է այս բոլորին վերջ տալ... Ինքներդ գիտէք և տեսաք որ նա ջնջեց մենավաճառը, ուրեմն էլ ինչ է մնում, չէ՞ որ նա կատարեց կրօնի պատուէրը, ժողովրդի պահանջը... իսկ ժողովուրդը, ձերդ սրբութիւնը դեռ չէք ուզում ծխելու... Ծխող մարդու համար — աւելացրեց նա ժպտելով — գիտէք, շատ գժուար է այսքան երկար գիմանալ առանց բարկանալու, խենթութեան նման բաներ... այս, ժողովուրդն էլ հէնց ալդպէս է... չը ծխելուց...

Մօշտէհիդը լրջացաւ, նաև նրան պահ մի, լեռու ասաց.

— Զերդ վսեմութիւնը Շահի կողմից հրաման ունի ինձ տալու:

— Ո՞չ, Աստուած ոչ անի, ինչո՞ւ հրաման... Կը լէլը ալամը միայն խնդրում է ձեզ սկսել ծխելու և օրինակ լինելու ժողովրդեան, որ այս բոլոր խոռվութիւնները... Գիշերս, օրինակ, բանտի վրալ են տուել, պահապաններ սպանել, մի ապստամբի աղատել...

— Լսել եմ. ասաց մօշտէհիդը — բայց ոչ մի կաթիլ արիւն չէ թափուած... իսկ ազատուողը Քէլբէլալի մեծ մօշտէհիդի նաիրն է, որին չէր կարելի բանտարկել... Շահը ալգտեղ էլ սխալ է գործել... բայց ես չեմ ծըխիլ... Քէլբէլալի մեծ-մօշտէհիդին է պատկանում վերացնել արգելքը. և ալդ արգելքը կը վերջանալ, եթէ օտարականների ձեռքից ամէն ինչ խլուի և մեր, ժողովրդեան իրաւունքները վերադարձուի մեզ...

Փոխ քաղաքապետին, մօշտէհիդի կտրուկ և քիչ խիստ ձայնով ասուած այդ խօսքերից լետոյ, մնում էր միայն ոտքի ելնել և մեկնել, սակայն նա նստած մնաց և գլուխը մտախոհ՝ խոնարհեց կրծքի վրայ:

Դա զարմացրեց կրօնապետին. և երբ երկուսն էլ քիչ լուռ էին մնացել, ասաց.

—Ուրիշ էլ ասելիք ունիք... աղօթքիս ժամանակն է...

Փոխքաղաքապետը ոտքի ելաւ ծանրութեամբ, յետոյ գունատ խոնարհուեց և հազիւ լսելու ձայնով մըմնջաց.

—Աշխարհիս աղօթարանը հրամալեց ինձ յալտնել որ եթէ չէք ուզում ծխելը սկսել, հարկաւոր է ձեզ հեռանալ քաղաքից և գնալ իր նշանակած տեղը...

—Աքսո՞ր... ժպտեց մօշտէհիդը—ինչ կար... Ասացէք Շահին որ ես կը գնամ, որովհետև ծխել չեմ կամենում...

Յետոյ վեցըրեց գետին դրուած Ղօրանը և բաց արաւ։ Փոխքաղաքապետը խոնարհուեց և դուրս գնաց։

Սակայն մօշտէհիդը սենեակում մենակ չէր. բացի դրանից, բաց դռներից բոլոր ծառաները ամեն ինչ լսել էին; Եւ չէր անցել կէս ժամ, որ լուրը տարածուել ցնցում էր ամբողջ քաղաքը։

Ժամը 10 է մօտերը արդէն լի էր թէ Թօփիանէի հրապարակը և թէ Աքքը շրջապատող փողոցները։ Աշտիանուն աքսորելու լուրը բերնէ բերան անցաւ—տարածուեց, լուզուած ամբոխը, շարքերը սեղմած և սպառնագին՝ իրար տնցան, մոլլաններ ու սէլիդներ բացարձակ քարոզում էին յարձակուել պալատի վրայ, գնալ Շահի մօտ, իրենց բողոքն ու պահանջը դնել...

Ապստամբութիւնը սկսում էր մեծ, ահաւոր չափերով։

Դեսպանատները սկսեցին լեցուել քրիստոնեաներով, անդիսական դեսպանատունը զինուեց, թնդանօթներ հանեց ու լեցրած՝ պատրաստեց իր դուսն աշտարակների վրայ, իսկ Մենավաճառի ընկերութեան գրասենեակը անմիջապէս դատարկուեց, որովհետև մի սպառնագին ամբոխ, արդէն աղաղակել սկսած՝ քալլում էր դէպի շէնքը։

Պալատում Շահը իր պարտէզն էր իշել, անհանգիստ քալլում էր ծառուղւու մէջ, ձեռքի վայտով ծառերի բները ծեծում անխօս և մռալի, մինչ Սադրագամն ու մինիստրները միմեանցից հեռու սպասում էին

և «չ ոք չեր համարձակւում մի բառ արտասանել։ Այսպէս տևեց մի քանի ժամ, դըսից փոքր առ փոքր ամբոխի ձայնը բարձրանում էր և ժամը 1 ի մօտերն արդէն մի ահաւոր աղաղակ գալիս էր ցնցելու պալատը։

Բազարի մուտքից, Սէրգէ-Մէլդանից արօւեցաւ ժողովրդեան առաջ գնալու նշանը։

Մի սէլիդ էր այդ, մի երկարահասակ երիտասարդ, որ ճգեց բազմութիւնը, ելաւ մէլդանի դռան պատուանդանի վրայ և գոռաց։

— Յանուն Մեծ մարդարէի, Խմամ Մէհտիի և նրա ջաննիշն Քէլբէլալի և Թէհրանի մեծ մօշտէհիդների! ...

— Սալաւաթ... կանչեց ամբոխը։

— Գնանք Շահին մեր ասելիքը ասելու և թող կործանուին այն մարդէկ, որոնք անհաւատներին են ծախում մեր երկիրը... Քալլեցէք...

Յետոյ սանեց ցած և համարձակ գնաց դէպի Արքի մեծ դուռը, որ բացւում էր ճիշտ պալատի վրայ՝ Մէլդանը—շահի կողմից։

Ամբոխի բուռն հոսանքից կիսաբաց դուռը ճռնչաց, և ժողովուրդը, հազարաւոր գլուխներ, ահազին աղաղակներով խուժեցին ներս, ետ մղելով պահակ զինուորներին։

— Դէպի պալատ, միւսիլմաններ, ով սիրում է Հազրաթը Մուհամմէդին... Կանչեցէք, եա Ալի...

— Եա Ալի... օռնաց ամբոխը և քալլեց։

Պալատի մեծ դուռը կողպած էր։ Սէլիդը քալլեց դէպի նախիքը Սալթանէի փողոցը՝ ամբոխը ետևեց, սակայն այնաեղ մի գունդ զինուորներ, այն էլ Շահի լեռնական կպտաղի թիկնապահները, մի խիտ պատկազմած, սուինները դէմ տուինն...։

— Ճանապարհ, գոռաց սէլիդը նրանց — եթէ դուք էլ անհաւատ եղիդիներ չէք, ճանապարհ առւէք...։

— Ետ գնացէք, գոռաց մի սպալ — հրաման չը կալ ալս կողմից։

— Լաւ ուրեմն, ժողովուրդ, դարձաւ սէլիդը ամբոխին — եթէ ալս կողմից ճանապարհ չը կալ, ուրիշ

կողմով գնանք... Յառաջ միւս փողոցներով...

Ամբոխը «Եա Ալի» աղաղակները բերնին դարձաւ,  
Արքի դռնից դուրս եկաւ, յետոյ, փողոցում մի կատա-  
զի վազք սկսեց երկու ճիւղերով. Մի ճիւղը սէլիդի ա-  
ռաջնորդութեամբ պտոյտ գործեց Շէմս-Նուլ Խմարէթի  
շուրջը և Ենդէրունի դռնից ներս խուժեց, իսկ միւսը  
մի ինչ որ կարճահասակ մոլլայի հետ Զաբբախանալի  
փողոցից վրայ տուաւ Արքի երկաթապատ գուան, փըշ-  
ըց, պահակներին ոտքի տակ առաւ, միմեանց կոխո-  
ւեց և Դէղը-էլմաս ծառուղու միջով հասաւ միանալու  
առաջինին:

Սէլիդը՝ Հաբերուլահն էր, իսկ մոլլան՝ Նաջաֆ-  
կուլին իր յաւիտենական անբաժան Սէլիդ խանի և ա-  
մենայանդուզն խէսփուշների հետ:

Պալատի դռնից խուժանը մզուեց դէպի Նալիքը  
Սալթանէի տան առաջ, Ալդտեղ, մինչև այդ ոչ մի  
զէնքի չը դիմող ամբոխն արդէն կատաղեց, երբ դար-  
ձեալ դէմ եկաւ այս անդամ շահի ձիաւորուած թիկ-  
նապահներին.

— Եա Ալի, գոռաց Սէլիդ Հաբերուլահը, յետոյ  
գետնից մի քար վերցրեց և նետեց դէպի զինուորները:

Նշանը բաւական էր. իսկոյն քարերի մի կարկուտ  
էր, որ գնաց տեղալու գորքի գլխին, իսկ մօտ կանգ-  
նածները սկսեցին փշրել արքալորդու տան լուսամուտ-  
ները և յառաջանաբ.

— Յառաջ, օռնում էին ետևից սեղմողները — պա-  
լատ մտէք...

Ասելը հեշտ էր, բայց Մուինը — նիզամը, թիկնա-  
պահների սպան, սուրն էր հանել և գոչում էր ամ-  
բոխին.

— Ե՞տ գնացէք, թէ չէ կը հրամալեմ կրակել...

— Զես համարձակուիլ, անհաւատների ընկեր, Եղիդ..

կանչում էր նրա դիմացը Սէլիդը:

— Ե՞տ ասում եմ... սպառնաց սպան:

— Յառաջ, ժողովուրդ:

— Կրակ...

Ու հետևեց հրացանների պալթիւն. նեղ փողոցը  
ՀՈՒՄԱՑ

լցուեց ծուխով, ճիշերով .. Մի խառնաշփոթութիւն յաջորդեց դրան. ամբոխը երեսը դարձրեց ու սկսեց ետ մղուել...

—Կրակ... Ետ քաշուեցիք, .. զինուորներ, այս-  
տեղ... կրակ...

Ահա թէ ինչ էր խուռմ երբեմն հրացանների  
պալթիւնի, խառնի խուռն աղաղակների, ճիշերի, հալ-  
հոլանքների մէջ...

—Յառաջ, խէսփուշներ, դաշուններով...

Մոլլալի զիլ կանչն էր: Առաջին ընկնողներից մէ-  
կըն էր եղել Գնդակը ճիշտ կրծքում, ետ մղուեց, ըն-  
կաւ մի գործաւորի վրայ, մի խուլ աղաղակ արձակեց,  
կքուեց... և մի վարկեանում ոտքերի տակ գնաց, խու-  
սափող ժխորի ոտքերի տակ...

Մինչ ալդ, պալատում սոսկումը քարացրել էր ա-  
մէնքին. Բայց ոչ. դրամատիքական ալդ ծալրահեղ ըո-  
պէներին, չը պակասեց ծիծաղելին ևս:

Նահը մտած խոր, ներքին սենեակները, լուռ նըս-  
տել էր մի անկիւնում՝ թմրածի նման: Սատրազամը  
մի քանի անձերով շրջապատուած՝ կծկուել էր Գիւլիս-  
տան ալգիի պատի տակ և ձեռքի թղթերն էր զուռ ու  
մուռ տալիս: Լուռութիւնը թագաւորում էր ամեն տեղ  
պալատում. ոչ ոք չէր խօսում. ամէնքը սրել էին ա-  
կանջները դէպի փողոցը:

Իսկ ալդ բոլորի մէջ յանկարծ ներսից երևում են  
վեց սենեկապատներ գլխից մինչև ոտք զինուած որսի  
հրացաններով և առաջնորդած Միրզա-Մէհմէտ խան  
շահի սպասաւորից, անցնում են կոկողավիզ ու կանգ-  
նում հարեմիանալի դռանը:

Ծիծաղելի էր տեսնել նրանց երկփողեան ողորմելի  
զէնքերը, նրանց գունատ գէմքն ու դողդոջիւն շըր-  
թունքները և ալդ բոլորի հետ կոկողավիզ կեցուածքը:

Եօթ հոգով ուզում էին պալատը պաշտպանել...  
Դրսում հրացանաձգութիւնը շարունակւում էր ճիշերի,  
խառնիխուռն աղաղակների հետ, սակայն ամբոխը ետ-  
ետ էր գնում, որովհետև տեղացող գնդակները փուռմ  
էին նրանցից համարձակներին. մանաւանդ որ զինուոր-

ների գնդերը սկսում էին գրէթէ պաշարել նրանց ե-  
քեք կողմից, սեղմելով դէպի էնտէրունի շատ նեղ  
անցքը:

— Կրակ... դեռ լսում էր սպալի ձայնը:

Բայց այլ ևս չէր լսում և ոչ իսկ Մոլլալի զիւ  
աղաղակները:

Զարդուած, պատերի սեղմած, հրած-հրմշակուած,  
տեղացող գնդակների կարկուածից սարսափահար՝ շտա-  
պել էր նա կծկուել, ոտքերի միջով անցնել և գրէթէ  
կիսամեռա դրութեան մէջ էր, որ գնաց ընկնելու նասրի  
խիսւանի մի սրճատան մէջ։ Խէսփուշների փոշին ան-  
գամ չէր երևում, ամբոխը կոխուել-տարել էր նրանց.  
մի քանիսները գետնի փոշին էին լզում, շատերը վի-  
րաւոր, հայհոլելով այս-այն կողմն էին անհետացել և  
Սէցիդ խանը, գժբազտ օպիսում ծխողը, ճիշտ մի ծառի  
տակ, գնդակահար՝ մեռել էր փոքրիկ փոսի մէջ, գըն-  
դակի պէս ինքն իր վրայ ժողովուած։

Եւ դեռ հրացանները պայթում էին, փողոցը ծը-  
խով, ճիշերով լեցնում...

Պահ մի ևս, և մի փոքրիկ թնդանօթի փոշը ե-  
րեաց պալատի աշտարակի վրայ...

Քիչ լետու Արքը դատարկուել էր, թողնելով փողոց-  
ների մէջ բազմաթիւ դիակներ...

Սակալի պարսիկ ժողովուրդը լաղթել էր։

Ճշմարիտ է, զոհեր և շատ զոհեր էր տուել նա,  
բայց զոհերի գնովն էր որ լաջողուեց իր իրաւունք-  
ները ետ կորզել։

Նահը վախեցաւ, զգաց որ լիբտւի, Ալէմզիրը երբ  
զարթնում է և մունչում, կարող է ոստումներ ևս  
գործել ու իր ճիրանների տակ բղկտել այն ամէնը,  
ինչ որ իր իրաւունքներն է բռնաբարում։

Ու Մենավաճառը ջնջուեց, միւս օրից իսկ լիովին  
լուծուեց, վճարելիք տուգանքը մի կերպ կատարուեց։  
Ջահը մի ընծալ ուղարկեց Աշտիանուն, աղաչեց Քէլ-  
բէլայի մօշտէհիդին և չէր անցել 20 օր, որ մունե-

տիկները շուկաներում ու հրապարակներում յալտարարեցին Մենավաճառի ոչնչացումն, հետևապէս՝ ծխելու արտօնութիւն մօշտէհիդի կողմից:

Ժողովուրդը իր արեան գնով ետ էր ստացել կորցուած իրաւունքները:

Սէլիդ Միջան Իրզան իրաւունք ունէր-Ալէմգիրը անյաղթելի էր... և այն՝ միմիայն իր յամառ, աննկուն և որը զլխաւորն է՝ ոգու ամբողջ ու միահամուռ ձգտման ոլժով...

Ա. ՓԱՓԱԶԵԱՆ